№ 11—12 (236) XXIII ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ 1913

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
REDACTION DU JOURNAL
„Droschak"
GENEVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ



ՍԻՄԷՕՆ ԶԱՒԱՐԵԱՆ

1865—1913

ՏԻՊԱՐ-ՌԱՀՎԻՐԱՅ

—

Ցուղարկաւորութիւն չէր, այլ կատարեալ ապօթէօզ... Վաղուց, գուցէ երբէք չէր տեսնուած հայկական երկնքի տակ՝ ժողովրդային զանգուածների և պայքարող մտաւորականութեան այդքան բուռն ու ցաւոտ համակրանքի արտայայտութիւն, այդքան ջերմ, սրտագին, միահամուռ ցոյցեր։

Ոչինչ չկար այդ համատարած սուգի և սրտառուչ թափօրների մէջ, որ յիշեցնէր սովորական մահերը։ Ոչինչ շինծու, արհեստական՝ այդ ահագին ու պատկառոտ համախմբումների մէջ, որ հետևում էին դիակառքին Կ. Պոլսում և Թիֆլիսում, այդ ջերմեռանդ բազմութեան մէջ, որ Խոջիվանքի գերեզմանատան ծունկ էր չոքում ինքնաբերաբար՝ վերջնագոթքը մրմնջալու... Պարզ էր ամեն ինչ, պարզ, անարուեստ և անխարդախ, ինչպէս ինքը, մեր պաշտելի հանգուցեալը։

Երկու ամիս է անցել եղերական դէպքի օրից և դեռ մահուան արձագանքը հնչում է — ցաւի ափսոսանքի, երբեմն նոյնիսկ յուսահատութեան շեշտերով — մեր երկրի բոլոր անկիւններից և դեռ երկար ժամանակ կը հնչէ նա մեր ականջներին, յիշեցնելով մեծ, աղէտաւոր, անփոխարինելի կորուստը։

Կորուստը—Հայ Ցեղ. Դաշնակցութեան, հայ աշխատաւոր ժողովրդի, ամբողջ հայ ազգի։

Ե՞րբ է տեսնուած այդքան սրտաշարժ համերաշխութիւն Սգի մէջ։ Ո՞ւմ դագաղի առջև են այդքան բուռն, անվերապահ հիացմունքով խոնարհուել ամենքը—համախոհ ու հակառակորդ...

Այդ հանգամանքը աւելի ևս ընդգծում է կորստի մեծութիւնը։

Քչւոր են անձնուրացները— աւելի ևս քչւոր են սիմոնատիպ անձնուրացները։ Հայ ժողովուրդը — փա՞ռք իրեն — արտադրել է և կը շարունակէ արտադրել իր արիւնազանգ արգանդից անվեհեր մարտնչողներ և անվկանդ առաքեալներ։ Բայց Զաւարեաններ կը ծնէ նա հատիկ-հատիկ։ Եւ ոչ միայն մենք— ամբողջ մարդկութիւնը շատ հարուստ չէ այդ տիպարառահվիրաներով։

Ո՞ւր է գաղտնիքը մեր ընկերոջ այդ անսովոր հմայքի ու անսովոր ժողովրդականութեան։

Կարդացէ՛ք յօդուածների ու ներբողների անվերջ շարանը, որ լոյս տեսաւ այդ մահուան առթիւ հայկական մամուլի մէջ։ Ամենքը մի սրբազան ջերմեռանդութեամբ գրաւատում են մեր թանկագին ննջեցեալի բարոյական առաքինութիւնները։

Սիմոն Զաւարեան արտակարգ դէմք էր նաև իր ինքնատիպ մտակազմով, իր ուժեղ իմացականութեամբ և գիտական պաշարով։ Բայց ահագին մեծամասնութիւնը նէկրոլոգների ծանրանում է նրա բարոյական գծերի վրայ, հռչակում է նրա պարզութիւնն ու մաքրութիւնը, անաղարտ շիտակութիւնն ու անսահման անձնուիրութիւնը։

Ժողովուրդը իրեն մատեցող գործիչների մէջ՝ ամենից առաջ բարոյական արժէքներ է փնտրում և եթէ չկան նրանք—ոչ մի խելք, ոչ մի արտակարգ իմացականութիւն չի կարող շահել ժողովրդական սիրտը... Կը շահէ գուցէ ժամանակաւորապէս, բայց երբէք անողոքաբար։

Բարոյականի այդ նախընտրութիւնը մտաւորի առաջ՝ միանգամայն հասկանալի է—և նոյնիսկ կրթուած, մտաւորական տարրերն էլ մատնում են նոյն նախասիրութիւնը։ Մարդ-անհատը այնքան աւելի արժէք կը ստանայ իր շրջապատի աչքում, այնքան աւելի կը բարձրանայ հասարակական ճշմարիտ արժէքների սանդուխի վրայ, այնքան աւելի կը շահէ յարգանք ու համակրանք, որքան աւելի կը շեշտուին նրա մէջ այդ բարոյական առաքինութիւնները։ Իմացականութիւնը, տրամաբանելու ոյժը, մտաւոր ընդունակութիւնները տուում են բնութիւնից, այն ինչ բարոյական օժիտները՝ անհատը սովորաբար ինքն է վաստակում՝ անդուլ, դժուարին ճիգերով, ինքնամշակութեամբ և ինքնադաստիարակմամբ, մաքառելով ժամանակի ու միջավայրի յարուցած անհամար խոչընդոտների դէմ։ Այդպիսի անհատն է միայն արժանի կոչելու մարդ՝ բառիս ճշմարիտ ու բարձր իմաստով։ Դիւրին բան չէ մարդ լինել, մանաւանդ մեր հայկական միջավայրում... Զաւարեանը — նպաստաւորուած, անշուշտ, իր առողջ ու բնատուր հակումներով—ինքն էր մշակել իր բարոյական անձնաւորութիւնը, ինքն էր ձուլել իր քաղաքացիական պատկերը և նա մէկն էր այն սակաւաթիւ ընտրեալներից, որ կարող էր ասել հպարտութեամբ.

„*Homo sum*“, „Ես մարդ եմ“!։

Եւ վա՜յ նրան, որ կը դիպչէր այդ անձնաւորութեան, որ կը փորձէր ստուեր ձգել այդ անբիծ պատկերի վրայ։ Հեզ, յիսուսեան կերպարանքը կը փոթորկուէր մի խոլ կրքով, աչքերը կը փայլատակէին և վտիտ մարմինը կը ծառանար հակառակորդի դէմ՝ ահեղ ու անողոքմ։

Ահա շարժման սկիզբն է, 90-ական թուականները „Դաշնակցութիւնը“ նոր հիմնուած, Քրիստոֆոր, Սիմոն, ընկերները գործի վրայ և հայկական չարախօսութիւնը սկսում է արդէն իր զազրելի գաղտասուքները կուսակցութեան պարագլուխների դէմ... „Նրանք իւրացնում են Սուրբ Գործի համար հանգանակած գումարները“...

Ամբաստանութիւնը գալիս էր այն ժամանակուայ ամենամեծ հայ օրգանի խմբագրութիւնից։ Զայնը հասնում է Սիմոնի ականջին, նա եռում է կատաղութեամբ և առանց երկար ու բարակ մտածելու, առնում է ատրճանակը, վազում յիշեալ թերթի խմբագրատունը, արձանանում շանթահարուած խմբագրի առաջ, որպէս

վրիժառու Նեմեզիդա և հաչիւ պահանջում յանցաւորը գաղտասուքների համար.

„Ցե՜տ վերցրէք, ապա թէ ոչ“...

Մաքրութիւնը, շիտակութիւնը և նման առաքինութիւնները դեռ բաւական չեն իդէալիստ-մարտնչողի կարիքը ստեղծագործելու համար։ Պէտք է և բնաւորութիւն, նկարագիր։ Պէտք են և քաղաքացիական առաքինութիւններ, կամքի ոյժ, մտքի ու գործողութեան անկախութիւն, արիութիւն ու խիզախութիւն։ Հերոսը, ռահվիրան ոչ միայն գիտէ տառապել ժողովրդական ցաւերով, ոչ միայն իր ջինջ հոգու խորքերում կ'ատէ ամեն ճնշում ու բռնութիւն, այլ և ընդունակ է հրաբխի պէս ժայթքել երբեմնապէս այդ բռնաւոր ուժերի դէմ, առանց հաշի առնելու իր անձի համար գալիք վտանգները։

Ահա մենք դարձեալ շարժման արշալոյսին. 1892-ն էր, Թիֆլիսը թաղում էր Գրիգոր Արծրունուն։ Եւ ինչպէս այսօր Սիմօնի թաղումին՝ այն ժամանակ ևս ռուս ոստիկանութիւնն առաջ անցաւ և թոյլ չէր տալիս, որ թափօրն ուղղւեր կենտրոնական փողոցներով։

Բայց ահա տեղաց մի գրոհ։ Մի խումբ երիտասարդներ արհամարհեցին ոստիկանութեան հրամանը, գլուխ անցան հսկայ թափօրին, քաշեցին իրենց ետևից զանգուածը, խորտակեցին ոստիկանների շղթան։

Խմբի հոգին էր երիտասարդ Զաւարեանը։ Երկրորդ անգամ բանտը հիւրընկալեց նրան, քիչ առաջ արդէն բանտարկւել էր Ցրապիզոնում, որից յետոյ մի տարի աքսորական եղաւ Քրիստոֆորի հետ՝ Թեսսարաբիայում։

Այդ առաջին թռիչքները արդէն իսկ բնորոշում էին ապագայ գործիչին։ 20 տարեայ դաժան անցքերի հնոցում միշտ աւելի ջեշտեցին այդ խորապէս ուրոյն բնաւորութեան հիմնագծերը, միշտ աւելի ճոխացաւ, ամրողջացաւ Սիմօնի բարոյական դէմքը, որ այնքան ուժեղ ազդեցութիւն ունեցաւ իր կուսակցական ընկերների վրայ։

Շաբլօնը տեղ չունէր այդ օրիգինալ պատկերի ու կարիքի մէջ, տեղ չունէին և սին փառքի մտահոգութիւնները և դատարկ սնօբիզմը։

Սիմօն դարձաւ յեղափոխական՝ իր հրեղէն խառնուածքի ուժով, ապա նաև իր ուրոյն դատողութեամբ, իր ինքնատիպ, յաւերժօրէն եռուն ուղեղի հրաշնագներով։ Եւ յեղափոխական երկարատև գործունէութեան մէջ նա ունեցաւ մշտապէս երկու հզօր սկզբունքխթաններ, որոնք և այնքան հազւագիւտ փայլ տուին նրա կարիքերին։

— Անհատապաշտութիւն և Այլասիրութիւն։

Իր բարոյական աշխարհահայեացքի երկու հիմնական սիւներն էին, երկու բևեռները, որ սակայն լրացնում էին փոխադարձաբար և կազմում մի ներդաշնակ ամբողջութիւն։

Ո՞ւմից էր ներշնչած արդեօք — Դարվինից, նէշէի՞ց, թէ ռուսական սուբ՝ եկտիվիստ փիլիսոփաներից, կամ գուցէ իր իր ուրոյն դատողութեամբ էր մշակել բարոյական այդ կուռ աշխարհահայեացքը, մանաւանդ անհատապաշտութեան իր բիւրեղեայ հաւատամքը, որով տոգորուած էր մինչև ուղ ու ծուծ։ Նա գիտէր, որ ընկերային էւոլիւսիօնը պիտի ծնունդ տայ վաղ թէ ուշ բարձրատիպ, իդէալական մարդկութեան և որ այդ վերջինը պիտի իրագործւի մարդ-անհատի աստիճանական կատարելագործումով, ուժեղ, բարձրատիպ անհատականութիւնների (individualité) յարաճուն ծնունդբերութեամբ։ (Ուժեղ և հարուստ՝ նախ բարոյական իրենց գծերով)։ Նա տխրութեամբ դիտում էր թէ ինչպէս ժամանակակից հասարակութիւնը մակարդակել է (niveler) մարդկային միլիոնաւոր բազմութիւնը տափակացրել անհատներին, զրկել նրանց իրենց ուրոյն առանձնայատկութիւնները շեշտելու կարողութիւնից։ Նա չէր սիրում շաբլօն, դիմազուրկ անհատներին, սիրում էր ընդհակառակը նրանց, որոնք գիտէին ամեն տեղ ու ամեն պարագայում արտայայտել իրենց ինքնութիւնը ուրոյն միտք ու դատողութիւն, ուրոյն գործ ու կամեցողութիւն, զերծ ու անկախ շրջապատի կաշկանդումներից, ամեն տեսակ այլասեռող նախապաշարումներից. սիրում էր նա, մի խօսքով, ուժեղ, ինքնատիպ անհատներին, յարգում, գնա՜ տում էր նրանց, թէկուզ լինէին ամենաոխերիմ հակառակորդներ ազգային-հասարակական պայքարների մէջ։

Իսկ Հայաստանում, Թիւրքաց Հայաստանում, սարկամտութեան լայնածաւալ անապատի մէջ՝ նա գնահատում էր անգամ սովորական հայ աւազակներին, որոնք նոյնպէս իրենց տեսակի ուժեղ անհատականութիւններ են։ „Անապատը այնքան է վհատեցուցիչ, ասում էր նա, որ ինձ ուրախութիւն են պատճառում անգամ այդ սակաւաթիւ աւազակաբարոյ տիպերը, որ գնում են սոսկ թալանի մտահոգութեամբ, զարնելու քրդին, տաճկին, երբեմն և հային... Վա՜տ չէր լինի, եթէ այդ ըմբոստ, սրատ յանդուգն հոգիները բազմանային մեր իներտ միջավայրում, ժամանակին հնարաւոր կը լիներ ուղղել հոսանքը այլ ճանապարհով“... Երբեմն ասես Շիլլերի աւազակների պաշտամունքն ունէր մեր Սիմօնը։

Իւրաքանչիւր անհատ պէտք է գիտակցէ իր մարդկային արժանաւորութիւնն ու կարողութիւնները, պէտք է ձգտէ դուրս նետւել այն կաշկանդող շրջանակներից, ուր արդի հասարակակարգը պահում է նրան կրաւորական հնազանդութեան մէջ, պէտք է չընդունէ կուրօրէն աւանդական բոլոր կարծիքներն ու հաւատալիքները, պէտք է քննադատաբար վերաբերւի դէպի բոլոր „հասարակական արժէքները“, Մերժէ նրանց, եթէ չեն համապատասխանում իր անհատական տենչանքների, իր սեփական իդէալի օգուն, պէտք է ձգտէ ազատագրւել

հանրային շինծու պայմանադրութիւններից ու նախապաշարումներից և համարձակ կռիւ յայտարարէ բոլոր „կեղծ արժէքների“ դէմ, յանուն մարդկային անհատականութեան սրբազան իրաւունքների։

Հայոց կեանքը մանաւորապէս որքա՜ն հարուստ է այդ կեղծ արժէքներով, սին ու շինծու մեծութիւններով և գռեհիկ նախապաշարումներով։ Դեռ չենք խօսում հազարաւոր այլ ոճրանիւթ ախտերի մասին... Եւ ի՞նչ զարմանք՝ որ Սիմօնը յաւիտենական ըմբոստացողի ու խարանողի դերումն էր ամենուրեք — Թիֆլիսում, թէ Պոլսում, Կիլիկիայում, թէ Մուշում — ամեն տեղ, ուր նրա ջինջ, անխարդախ ու պահանջկոտ ոգին զարնւում էր շրջապատի բարոյական այլանդակութիւններին։

Ո՞ւ յանուն անհատականութեան։ Անհատը պէտք է նաւաճէ հնարաւորութիւն՝ զարգացնելու իր բոլոր մտաւոր ու հոգեկան կարողութիւնները։ Բայց անհատի այդ իրաւունքը, Սիմօնի հասկացողութեան մէջ, միանգամայն ներդաշնակ է ընդհանրութեան, հաւասարութեան իրաւունքների հետ։ Իւրաքանչիւրը պէտք է պնդէ, պէտք է շեշտէ ամեն առթիւ իր սրբազան, անկապտելի անհատականութիւնը, բայց և միաժամանակ պարտաւոր է յարգել ուրիշ մարդկանց նոյնքան սուրբ ու անբռնաբարելի իրաւունքները։

Ինքնասիրութիւնը կամ կուզէք ինքնապաշտպանութիւնը, էգօիզմը իր ազնուագոյն ըմբռնումով ձուլւում է — Զաւարեանի դէմքի ու աշխարհհայացքի մէջ — այլասիրութեան կամ ալտրուիզմի հետ։ Անտիթեզ, հակօրինութիւն չկայ երկու կատէգօրիաների միջև, եթէ միայն էգօիզմ բառի տակ հասկանանք լոկ մարդկային անհատականութեան ու նրա իրաւունքների շեշտումը և ոչ բիրտ եսամոլութեան ու սանձարձակ վայելումի մի հաւատամք։ Դա նիչչէեան կամ շտիրներեան էգօիզմ չէ, որ հեգնում ու ոտնահարում է այսպէս կոչւած „իդէալները“, գաղափար, անձնուիրութիւն, հայրենասիրութիւն, պարտականութիւն և այլն։ Ընդհակառակը՝ սիմօնական անհատապաշտութիւնը խիստ բարձր է դասում այդ իդէալները, քարոզում է մշտապէս զոհաբերել յանուն նրանց, քարոզում է անդադրում զրկանք, նահատակութիւն,— յանուն Գաղափարի։

Ակնետ չէր բնաւորութեամբ, ճգնաւոր չէր իր խառնուածքով։ Նա սիրում էր կեանքը, սիրում էր պաշտելու չափ բնութիւնը և կուզէր, անտարակոյս, ապրել լիաբուռն, ներդաշնակ, ամբողջական կեանքով։ Բայց հայկական ցաւոտ իրականութիւնը դնում էր կենսուրախ մարդու առջև իր անողորմ ՐԵԼՕՆ. նա ստիպում էր իդէալիստ մարտնչողին կիսւել, կքւել, այլասերւել, նա խեղդում էր նրա մէջ եսի ուժեղ, օրինաւոր պահանջները... Եւ ազատութեան ու հաւասարութեան ոգեվիրան առաջ էր գնում ասկետութեան ծանր խաչը շալակած, յօժարակամ հրաժարւելով դեանքի ամեն վայելքներից, որովհետև իր շուրջը ամենուրեք տեսնում էր թշւառութիւն ու արտասուք...

Եթէ մեր ընկերոջ լայն ու վեհանձն սիրտը բաց էր մարդասիրական ամենավեհ թռիչքների համար, եթէ նա ընդունակ էր սիրել, յարգել մարդկային անձնաւորութիւնը ընդհանրապէս, անկախ տեղից ու պարագաներից, համակրել նրա վշտերին ու զրկանքներին — ապա որքա՜ն աւելի ևս զգայուն էր նա հարազատ ցեղի, իր արիւնակից հայկական զանգւածի ցաւերի հանդէպ։

„Հարազա՜տ“, „արիւնակից“...

Որքան էլ այդ պարզ սիրտը ըմբոստանար ամեն տեսակ շրջանակների ու անջրպետների դէմ, այնուամենայնիւ նա ևս, ինչպէս և բոլոր երկրների ճշմարիտ ընկերվարականները, դնում էր, չէր կարող չդնել, մի յայտնի տարբերութիւն հարազատի և օտարի միջև, սիրում էր առանձնապէս ջերմ ու քնքոյշ սիրով իր սեփական ժողովուրդն ու հայրենիքը։ „Ուրիշ կերպ էլ անհնարին է — ասում էր յաճախ վիճաբանական ժողովների մէջ, արծարծելով հայրենասիրութեան իր դաւանանքը. դա բնութեան պահանջն է, հայրենիքը ոչ այլ ինչ է, բայց եթէ ընտանիքի ընդլայնումը և բնական է, որ աւելի սերտ, աւելի ջերմ զգացումներ տիրեն մի հայրենիքի զաւակների միջև, քան թէ ամբողջ մարդկութեան անդամների“։

Սին ու տարտամ, հայրենազանց կոսմոպոլիտիզմը, որին յարել էր Զաւարեանը ուսանողութեան առաջին օրերում ռուսական նիհիլիզմի ազդեցութեան տակ, շուտ էքացաւ հայրենի իրականութեան անողոք պահանջների հանդէպ։ Հարազատ ժողովրդի անօրինակ տառապանքը միշտ աւելի և աւելի արծարծեց նրա մէջ հայկական հայրենասիրութեան կրակը, որ հասնում էր մի կատարեալ պաշտամունքի. Եւ շատ յաճախ նա ստիպւած էր իր ընկերների հետ միասին պայքարել ընկերվարութեան սխալ, թերամիտ ըմբռնումների դէմ, որ մատնում էին սոցիալիզմի հայ նորընծաները մարքսիստական դպրոցից։ Տարւելով կոսմոպոլիտիզմի միամիտ զառանցանքով նրանք պահանջում էին մի համայնապարփակ Սիրոյ մէջ ընդգրկել ողջ մարդկութիւնը, պահանջում էին դրժել ազգ ու հայրենիք, իբրև հնացած, „բուրժուազական ֆէտիշներ“, ընդունել թիւրքահայկական դատն ևս, իբրև ոչ-ազգային, այլ պարզ մարդասիրական մի գործ, որին „կարելի է նպաստել“։

Քչւոր էին, բարեբախտաբար, այդ անհեթեթ թէորիայի պաշտպանները — մի քանի գեներալներ առանց բանակի — և ժամանակն ու ստացած դասերը նրանց ևս խելքի բերին։ Անմիս, անարիւն կոսմոպոլիտիզմը քննադատութեան դիմացող բան չէր. քարոզելով ամենքին սիրել, նա իրօք ոչ ոքի չէր սիրում. համամարդկային

Սիրոյ տարտամ անհունութեան մէջ լուծուում, կորչում էր ամեն մի զգացում...

Զաւարեանի սրտի և ուղեղի համար անհանդուրժելի էին այդ վնասակար զառանցանքները, որ բնութեան ու պատմութեան ամենակոպիտ բռնաբարումն էին։ Եւ նա հակազդում էր իր կրակոտ խառնուածքի բոլոր ուժով։ Նրան յաճախ կ'անուանէին շովինիստ, ազգանվեր։ Դման ածականներ կը նետուէին նրան՝ երբեմն նաև մեր շարքերից, այսպէս կոչուած „անջատական“ նորընծաներից։ Սիմոնի հոգը չէր։ Ցիշո՞ւմ էք Խրիմեանի թաղումը։ Պատռում էր հայութեան պարծանքներից մինը և, սակայն, այդ մահը ասես սովորական անցքերից էր մեր պահպանողական, ազատամիտ ու մի կարգ ձախակողմեան տարրերի աչքում։ Ոմանց համար մեռնողը մի պարզ կղերական էր, ուրիշների համար՝ մի անպէտք կաթողիկոս, անշնորհք վարչագէտ, Էջմիածինը քանդող, դրամները անհաշիւ ծախսող և այլն։

Գրիգոր եւ Սիմոն

„Դաշնակցութիւնը“, որին յաճախ են մեղադրել ազգային արժէքները գրժելու մէջ, դառնութեամբ հանդիսատես էր այդ անլուր վանդալիզմին, այդ աղաղակող անարդարութեան։ Եւ մեծ հայի թաղման օրը մէկը սլացաւ Թիֆլիսից դէպի Էջմիածին, նետուեց գահավէժ անշուք հանդէսի մէջ, իրարանցում ձգելով իր շուրջը, ցցուեց իր վախտ մարմնով բացուած գերեզմանի առջև և ցաւից ու զայրոյթից գոռալով, արտասանեց ընդհանուր ուշադրութեան մէջ իր յուզիչ գամբանականը, որ մի խանդավառ ու անվերապահ ներբող էր Խրիմեան Հայրիկի։

Սիմոն Զաւարեանն էր։ Սոցիալիզմի թոթովախօս ասպետները նորէն շպրտեցին նրա հասցէին և նրա վարած կուսակցութեան հասցէին սովորական ածականները՝ „շովինիստ“, „կղերական“.. Սիմոնի հոգը չէր։ Նա եկել էր հասկացնելու անգիտակից բազմութեանը, որ մեծ մարդկանց չի լինի չափել գաճաճ չափերով և այն վայրկեանին, երբ նա մի չքնաղ յափշտակութեան մէջ մեռած կաթողիկոսի գովքն էր կարդում — փարաջաւորը կամ Էջմիածնի „քանդող ճարտարապետը“ չէր պատկերացած նրա յիշողութեան մէջ, այլ Խրիմեանը, 60 երկար տարիների անզուգական աշխատաւորը, սգաւոր հայրենիքի կենդանի մարմնացումը, Վասպուրականի լացող ու մարտնչող Արծիւը։

Սիմոն չէր մոռանում Խրիմեանին։ Թերևս հոգիների մի յայտնի ազգակցութիւն կար երկուսի միջև։ Նոյն լայն, պարզ, համբերատար ոգին, նոյն բարձր ու խիզախ սլացքը, նոյն օրիգինալ ու թափանցող միտքը, նոյն գեղեցիկ incohérence-ը (անյօգ, անկապ) խօսքերի ու քայլերի մէջ, վերջապէս նոյն խանդավառ ժողովրդասիրութիւնը, նոյն իդէալիստ, խստաբարոյ դերվիշութիւնը...

Սիմոն չէր մոռանում Խրիմեանին։ Վասպուրականի Արծիւը նստած էր նրա գլխի մէջ՝ մահուան նախօրեակին իսկ, երբ մեր ընկերը խմբագրում էր յօբելեանական իր վերջին յօդուածը։ Այդտեղ ևս, խորհելով ազգային արժէքների, սովորութիւնների ու արատների մասին, նա չի մոռանում ցաւոտ սրտով ակնարկ նետել մօտիկ անցեալի վշտաբեր գրուագի վրայ... „Ինչո՞ւ այնպէս անշուքթաղեցին Խրիմեանին“...

Ի՜ հզօր ու շքեղ անհատականութիւն, հպարտ իր բիւրեղեայ մաքրութեամբ, ճշմարտասէր և ճշմարտախօս ամեն պարագայում, անողոք վատութեան ու կեղծութեան հանդէպ, ծայրայեղ ու անզուսպ իր բարկութեան թռիչքների մէջ, բայց և ընդհանրապէս զիջող, ներողամիտ, հաշտարար։ Երբ կը զայրանար ու կը բռնկուէր՝ ասես չարութեան մարմնացումն էր բայց փոթորիկն անցաւ — և ձեր առջև կանգնած էր մի բոլորովին տարբեր մարդ՝ նազովրեցու մեղմութեամբ ու խոնարհութեամբ։ Գրոհ կը տար բուռն թափով այս կամ այն հակառակորդի կամ ընկերոջ դէմ, աւելի շուտ նրա այս կամ այն կարծիքի ու վարմունքի դէմ, կը խարանէր, կը դատափետէր ամենակծու մակդիրներով, բայց անցաւ վիճաբանութեան տենդը — Սիմոն ինքը կը մոտենար հակառակորդին, այն հակառակորդին, որի մէջ դեռ կը նշմարէր մարդկային կայծ։ Եւ ո՞վ է, որ երբևիցէ — անգամ վէճի, գաղափարային կրքոտ ու ցասկոտ ընդհարումների վայրկեաններին — չի խոնարհուել Սիմոնի այդ վեհ, ջենտլմէն հոգու առջև։ Ո՞վ է, որ անգամ ամե-

նաբուռն յարձակումներ կրելուց յետոյ չի զգացել անդիմադրելի պահանջ՝ հաշուելու վերստին այդ խարանող դատաւորի հետ, որ միացրել էր իր մէջ ռօքեսպիէռական երկու ծանօթ, աշխարհահռչակ ատրիբուտները. „անկաշառ“—„ամբաստանող“։

Սիմոնեան յարձակումները գրեթէ միշտ առարկայական բնոյթ ունէին — ոչ անձնական։ Եւ այդ շիտակ առարկայականութեան ու անաչառ արդարամտութեան չափազանց շեշտուած հակումը մղում էր նրան երբեմն դէպի անօրմալ քայլեր։ Կը տեսնէիք նրան երբեմն հովանաւորի դերում՝ հանդէպ այս կամ այն անհատի, որ չէր գործել դաւաճանութեան պէս ծանր յանցանքներ, բայց որ ծանրապէս մեղանչել էր կազմակերպութեան այս կամ այն սկզբունքի դէմ և այդ պատճառով հալածւում էր կուսակցական ընկերներից։

Այդպիսի դէպքերում՝ մի շարք բարդ զգացումների հետ՝ Սիմոնի մէջ խօսում էր դարձեալ նոյն անհատապաշտութեան զօրաւոր ձայնը, որ մի բնազդային համակրանք ունէր դէպի հալածական անհատն ու խումբը, դէպի հալածական փոքրամասնութիւնը...

Սակայն նա ինքը որքա՞ն յարգող էր կուսակցական կարգապահութեան, դիսցիպլինի։ Այդ ըմբոստ, հպարտ, գերազանցօրէն ուրոյն ու անկախ նկարագիրը որքա՞ն սիրայօժար գիտէր ենթարկուել մեծամասնութեան որոշումներին, անգամ երբ նրանք տրամագծօրէն հակասում էին իր սեփական մտքերին։ Անհաշտ հակառակորդ էր նա 1902-ին պատրաստուող „Փոթորկի“ գործունէութեան և ամեն ճիգ ի գործ էր դրել, որպէս զի չընդունուէր կուսակցութեան մէջ այդ նոր ու վտանգաւոր մեթոդը։ Երբ, սակայն, վերջինը ընդունուեց մեծամասնութեամբ — իբրև հայկական անօրմալ կեանքի անօրմալ մի պահանջ — Զաւարեանը ոչ միայն համակերպեց, այլ և եռանդով գործակցեց ընկերներին այդ ուղղութեամբ։

Ագիտատորը, յեղափոխական քարոզիչը հանդիսանում էր միանգամայն և գերազանցապէս խուզարկու միտք, անդուլ ու անխոնջ աշխատասիրութիւն։

Ծրնեում — ուր մօտ երկու տարի (1902—1904) մեր սիրելի ընկերոջ գործակցելու բախտն ունեցանք „Դրօշակ“-ի խմբագրութեան մէջ — նա թէ ամենայն բարեխղճութեամբ կատարում էր իր խմբագրական պարտաւորութիւնները, գրում, կապում, թղթակցում ու առաքում, և թէ միանգամայն — ժամանակի, վայրկեանների մի ապշեցուցիչ բաշխումով ու անտեսութեամբ — հետևում էր համալսարանական ամեն տեսակ դասախօսութիւնների, հետևում էր պատանեկան եռանդով, անդադար կարդում, նօտեր առնում, ուսումնասիրում։ Խիստ հազուագիւտ են մեր մէջ այնքան բազմակողմանիօրէն զարգացած անհատներ, քիչ կան ուղեղներ՝ այնքան լեցուն փաստերով, թուերով ու ընդհանրացումներով՝ բոլոր ազգերի ու պետութիւնների կեանքից, անտեսութիւնից, պատմութիւնից և ամենից առաջ իր հայրենի իրականութիւնից։

Տիպար-խուզարկու և տիպար-ագիտատոր։

Հռետոր չէր, ինչպէս և չէր գրող ու հրապարակախօս։ Բայց նա գիտէր հրապուրել ունկնդիրներին իր բացարձակ անկեղծութեամբ, ճշմարտախօս լեզուով, իր անպաճոյճ ձևերով և միշտ հիւթալի, բովանդակալի պատմութիւններով։ Բնազդային գարշանք ունէր դէպի փքուն, ճոռոմ, ուռուցիկ ճարտասանութիւնը և դէպի այն բոլոր հռետորները, որոնք վայրկենական աջողութեան համար կը գան ուռցնելու իրողութիւնները, վարագուրելու կացութեան սուերները և շլացնելու իրենց լսարանը լաւատես ու շռնդալի դիագնօզներով ու պրոգնօզներով։

Այդտեղ ևս մեր սիրելի ընկերը ընկնում էր յաճախ ծայրայեղութեան մէջ։ Նրա գարշանքը դէպի ռէտորիկը (*rhétorique*) հասնում էր այնտեղ՝ որ նա տրամադիր էր ժխտելու և հռետորական ընդունուած ձևերի օգտակարութիւնը, գեղեցիկ ու ներդաշնակ լեզուի ոյժը, ինչպէս նաև գեղեցիկ ոճի արուեստը հրապարակագրութեան մէջ և այլն։ Խօսեցէք և գրեցէք ինչ լեզուով ու ոճով կուզէք—միայն թէ հասկանալի, մատչելի լինի — այսպէս էր հրահանգում նա։ Ատելութիւնը դէպի դերասանները դառնում էր յաճախ ատելութիւն դէպի իսկական արուեստագէտները։ Այդ գիծը ընդհանուր է մեր մի շարք հին ընկերներին, որ ռուսական համալսարան են են անցել և գտնուել են երբեմն յեղափոխական „Նարոդնայա Վոլիա“-ի ազդեցութեան տակ։ Նրանց բոլորին յատկանշում է փոքր ինչ անձուկ ու ցամաք ուտիլիտարիզմ (օգտապաշտութիւն) այդ կարգի խնդիրներում,—մի հանգամանք, որ կարծես դժուար է պարփակուում նրանց խանդավառ ու բարձրասլաց իդէալիզմի մէջ։

Ծայրայեղութիւնները երկրորդական են. էականն այն է, որ Զաւարեանի քարոզչութեան մէջ, թէ հրապարակային բազմամարդ լսարաններում, և թէ „ստորերկրեայ“ նկուղներում, փոքրաթիւ ունկնդիրների առաջ՝ երբէք չէիք նշմարի կեղծ, արուեստական շեշտեր, երբէք նա չէր թագցնի, չէր վարագուրի իրականութիւնը յանուն ագիտացիոնական նպատակների։ Այդ անվախ մարդը մէկ երկիւղ միայն ունէր—արատաւորել ճշմարտութիւնը։ Այդ երկիւղը այն աստիճան ուժեղ էր նրա մէջ, որ երբեմն կը տեսնէիք թեզն ու անտիթեզը, դրութիւնն ու հակադրութիւնը միաժամանակ պաշտպանելիս։ Կ'արծարծէր մի միտք ամենայն եռանդով, իր ամբողջ էութիւնը դնելով նրա մէջ։ Սակայն սկեպտիկ, քննադատական ոգին գործում էր յարաժամ նրա եռուն, մշտա-

բորբոք ուղեղում։ Վախենում էր նա, մի գուցե իր պաշտպանած թեզը իսկական, բովանդակ ճշմարտութիւնը չէ և նա ինքը մանում էր հակաճառողի դերի մէջ, ցուցադրում էր իր թեզի անպատեհութիւնները, սուերները... ի վերջոյ թեքւելով այնուամենայնիւ դէպի մէկը երկու դրութիւններից։

* * *

Կատաբելատիպ — և համեստութեան։ Ոչ մէկը գուցէ հայ ինտելիգենտներից չէր հասել փառքի այն բարձունքներին։ Սիրած ու մեծարուած ամբողջ լայնածաւալ կազմակերպութիւնից գրեթէ համահաւասար Քրիստափորի հետ՝ նա մի օր հասաւ իր գեղեցիկ ու պլեծուփ կարիէրի գագաթնակէտին, ընտրուեց գրեթէ միաձայն ռուսահայոց առաջին Constituante-ի, կենտրոնական Ժողովի նախագահ։ Տարաւ այդ նուիրական պաշտօնը լիակատար արդարութեամբ ու ձեռնհասութեամբ, եղաւ ամենից գործնական միտքը այդ բազմամարդ Ժողովի մէջ — և մինչդեռ մենք, շատերը մեզնից զբաղուած էին սկզբունքների ու թէորիաների արծարծումով, Սիմոն արտասանեց լաւագոյն, ամենախելացի ճառը, որ կը մնայ միշտ հայոց արշիվներում, իբրև կոթող նրա ընդարձակ, հանրագէտ ու գերազանցապէս գործնական մտքի։ Ծափահարեց երկար ու որոտագին, արժանացաւ, իբրև նախագահ և իբրև բանախօս, ամբողջ Ժողովի, նաև փոքրաթիւ հակառակորդների մեծարանքին, ստացաւ մի եզակի, նախանձելի դիրք, յաչս ամբողջ հայութեան։

Եւ երբէք, սակայն, լոյսի շլացուցիչ ճաճանչները չկուրացրին նրա պայծառ ու շիտակ տեսողութիւնը, երբէք ամենափայլուն դիրքերն ու աջողութիւնները չկարողացան մի նշանախեց անգամ խախտել նրա առաքելական հեմեստութիւնը, ուէ ճեղք բաց անել նրա յստակ ու ամբողջական նկարագրի մէջ։ Անցաւ փառքի գինովութիւնը — և Սիմօնը նոյն վաղեմի դերվիշն էր... Երբէ՛ք ցուցամոլութեան ուէ սուեր և երբէք ինապարծ ամբարտաւանութեան ուէ ժեստ...

Ա՜հ, բախտի անագորոյն խաղ... Ո՞վ է, որ ճանաչել, ըմբռնել է Նրան և կարող է գրի առնել այս յիշողութիւնները առանց արցունքի... Դիոգենեսեան լապտերով պէտք է զինուել՝ նման գոհարներ գտնելու համար։

Եւ սակայն, փառքի մահոգութիւնները խորթ չէին մեր Սիմօնի բնութեանը։ Նա նրանցից չէր, որոնք մի տեսակ մտաւոր երկչոտութեամբ յետ են քաշւում դէպի խաւար անկիւնները, գերադասում են մնալ միշտ անյայտութեան ու կորածութեան մէջ, ունենալով հանդերձ ուժեղ ու ազդեցիկ անհատականութիւն, մտաւոր փայլուն կարողութիւններ։ Նման տիպարներ ևս կան մեր մէջ։ Այդ էլ համեստութեան — մարդկային այդ բարձր առաքինութեան — մի առանձին ձևն է։

Զաւարեանի խառնուածքը ըմբոստ էր այդ ձևի համեստութեան դէմ։ Նա ձգտում էր յարաժամ դէպի առաջին շարքերը, ձգտում էր միշտ՝ դէպի լեռը։ Պատնէշների, մարտական բարրիկադների գագաթներն էին հրապուրում նրան, և նա մղւում էր տարերայնօրէն դէպի այնտեղ, իր մտաւոր ու հոգեկան ուժի հպարտ գիտակցութեամբ, բնաւ երբէք չտարուելով մանր ու ամուլ սնափառութիւններով, այլ տոգորուած սոսկ տիրական մի բաղձանքով — փութացնե՞լ Սուրբ Դատի յաղթանակը, գո՜րծ կատարել, ըստ կարելւոյն արագ ու բեղմնաւոր, առաջնորդե՞լ պայծառ մտքով անօգնական ու ագէտ զանգուածները դէպի Իդէալը...

Վերջացնենք։ Սպառել այսպիսի թռուցիկ մի յօդուածի մէջ այդ բարդ ու բազմերանգ անհատականութեան ամբողջ էութիւնը — անհնարին է։ Կը գայ ժամանակ, երբ Քրիստափոր և Սիմոն — „Դաշնակցութեան“ երկուր տիպար-ռահվիրաները — շատ կողմերով հակոտնեայ և սակայն ներդաշնակող, փոխադարձաբար լրացնող, մինը աւելի հաւասարակշռուած, աւելի պաղ, տրամաբանող ու աննման կազմակերպող, միւսը յաւիտենօրէն եռուն ու ոստոստուն, նոյնպէս կազմակերպող, բայց աւելի յաճախ քանդող, հարուածող, գերազանցապէս անհրաժեշտ նաև քանդումի աշխատանքի մէջ — կը գա՜ յ, այո, ժամանակ, երբ նրանք երկուսը կը ցուցադրուին հայկական երախտագէտ սերունդների առջև, կենսագրական ընդարձակ գրուածքներում, իրենց հզօր ու դիւթիչ կերպարանքներով, գաղափարային անհասանելի մեծութեամբ։

Առայժմ բաւականանանք այս հակիրճ ուրուագիրներով։

Մեռելներ կան, որ թերևս պէտք էլ չունին կենդանագիրների ու յուշարձանների։ Ոչ մի գագաղ, ոչ մի տապանաքար չի բաժանի մեզ, ժամանակաւոր ողջերիս, մեր հարազատ Սիմօնից, մեր անմոռանալի Քրիստափորից։ Նրանք կը մնան միշտ մեր ուղեղների ու սրտերի մէջ, մեր ճիգերի մտահոլովատ լաբիրինթոսում, որպէս յաւերժական ուղեկիցներ և անբաժան ճառագայթող փարոսներ։ Եւ դժուարին, տագնապալի վայրկեաններում, երբ հինաւուրց կաղնին — „Դաշնակցութիւնը“ — նորէն ու նորէն կը յարանի դէմ յանդիման չարաշուք փոթորիկների ու վտանգների, մենք ամեն անգամ հարց կը տանք մեզ.

— Ի՞նչ կ'աներ արդեօք Քրիստափորը, ինչպէ՞ս կը վարուէր Սիմօնը։

Արցունքներ շատ թափեցինք, ընկերներ։ Մահուան ծանր, դաժանօրէն անակնկալ հարուածի հանդէպ՝ մի վայրկեան շշմոլոր հայեցինք մեր շուրջը և սարսափած յետ մղեցինք պարպւող անդունդի առջև։ Այժմ զգաս-

տանանք։ Սիմոնները չեն էլ սիրում երկար լալ ու լացուիլ։ Սի՛րտ առնենք և խո՛ր ու խոր ներշնչենք մեր մարած ուսուցիչների օրինակով։ Ունենա՞նք իւրաքանչիւրս մի մանիկ այն հրաշալի և հրաշագործ կորովից, գաղափարային այն սրբազան յափշտակութիւնից, որոնցով ապրում ու շնչում էին մեր կազմակերպութեան հիմնադիրները և այն ժամանակ մեր Դատը առաջ կերթայ անսայթաք—դէպի յաղթանակ։

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԸՆԿԵՐՈՋ ՑԻԾԱՑԱԿԻՆ

—

Սիրելի՛... Դառն օրեր շատ եմ ապրել, այսօր կարծես դառնագոյնն է... Երբեք այնքան ճնշուած, խորտակուած չեմ եղել, ինչպէս այժմ։ Սրանից 21—22 տարի առաջ, Դերեկայ վանքի մօտ, երբ դեռ նոր էի ոտքս դրել կեանքի շէմքին, քրդերը սպանեցին իմ սիրելի ընկերոջ Մովսէսին (Ներսէս Իշխանեան)։ Լրեխի պէս լաց եղայ. զգում էի ինձ միանգամայն որբացած։ Մովսէսը աւելի տարիքոտ էր և փորձառու, իսկ ես երիտասարդ ու անփորձ։

Անցան այնուհետև 21—22 ձիգ տարիներ. ինչե՞ր չեկան մեր գլխուն. քանի՛ անգամ մահու ուրուականը սլացաւ մեր վրայից — տքնեցինք, մարզուեցինք, ծերացանք. ալեզարդ մազեր, աւերուած ջղեր... Եւ ահա նորէն մի դաժան հարուած, ամենածանրը, որ ստանում եմ այն հեռաւոր օրերից ի վեր և որի տակ վերջապէս զգում եմ ինձ—որբ։ Մահը խլեց մեզնից իմ սիրելի, իմ պաշտելի Սիմօնին։ 20 տարի է, ինչ ճանաչեցի նրան — և 20 տարի էլ շարունակ կը սիրէի։

Յաս տարի առաջ էր։ Երկարատև թափառումներից ու տանջանքներից յետոյ, ինչպէս բուքից ազատուածը, մի տաքուկ սենեակի մէջ, հանգիստ էի առնում։ Քանի մի ընկերներ եկան մօտս. մինը առաջարկում էր Սասուն գնալ, միւսը՝ Պարկաստան, երրորդը՝ մի այլ տեղ. բայց ես բոլորովին ուժասպառ էի և կուզէի ժամանակաւորապէս հանգստանալ։ Մերժում էի ընկերներին։ Բայց ահա Սիմօնի մի նամակը.

— „Հանգստանալու ժամանակ չէ սիրելիս. ես պէտք է երթամ Կիլիկիա, դուն էլ պէտք է գաս ինձի հետ“։

Մերժել այլ ևս չէի կարող—գրողը Սիմօնն էր։ Եկաւ ինքն անձամբ և ես խօսք տուի։ Նորէն տարագրի ցուպը ձեռքս առայ։ Սիմօնս անչափ ոգևորուած էր, բնաւ չէր հանգստանում, անվերջ աշխատում էր։ Ուր էլ լիներ—իսկոյն բարեկամների, ընկերների մի շրջան կը կազմեր. կը մտնէր բոլոր խաւերի վէջ, այնքան նա մատչելի էր։ Ուր էլ գտնուէր, բոլոր տեղերի հետ կապեր կը պահպաներ և ամեն վայրից տեղեկութիւն կունենար։ Թղթակցութեան մէջ անսովոր եռանդ ուներ։

Երկար պտոյտներից յետոյ՝ Բէյրութ ենք, ապրում ենք մի հիւրանոցում։ Գնացել էի դուրսը պտտելու։ Վերադառնում եմ և մտնում Սիմօնի մօտ։ Նրա դէմքը այլայլուած է, մտքերը այլուած։ Ի՞նչ է պատահել, հարցնում եմ. պատասխան չէ տալիս։ Նորից եմ հարցնում—և նա հեռագիրը է դնում առջևս... Քրիստափորի մահուան լուրն էր։ Երբ հեռագիրը կրստանայ, ալքօլի վրայ թէյ կը պատրաստէր և սոսկումից ու շփոթելուց ձեռքերը կ'այրէ։ Շատ արտասուելուց՝ դէմքի արտայայտութիւնը բոլորովին փոխուել էր։ Խե՜ղճ Սիմօն, ինչպէ՞ս չը լար...

Սակայն վհատութիւնը վայրկենական էր. նա շարունակեց աշխատիլ։ Մի նոր գոյժ հասաւ—այս անգամ Կովկասից։ Պայթել էր հայ-թաթարական ընդհարումը, մի անակնկալ, որ մեզ երկուսիս էլ շշմեցրեց։

Պէտք է վերադառնայի առաջամասէս Ծրնև։ Սիմօն դեռ պիտի մնար։ Յանձնեց ինձ մի քանի նուիրական իրեր՝ Ծրնև բերելու համար։ Հաւաքել էր իր կիլիկեան թափառումների միջոցին։ Սիմօնը — պաշտող, սիրահար հայկական բնութեան, նրա օդի, ջրի, լեռների ու ձորերի... Ձէյթունի մէջէն անցնող Ջիհան գետի ջրից լցրել էր մի շիշ և պահել, որպէս սրբութիւն։ Մերսինի թէ Թարսուսի բանտարկեալներին այցելելով, ստացել էր նրանցից, իբրև յիշատակ, նրանց ձեռքի աշխատանք—վեց փայտէ գդալներ։ Մի ինչ որ լեռից մի կտոր քար էր վերցրել և մի քանի ուրիշ մանր մունր բաներ, բոլորն էլ կիլիկեան յիշատակներ, յանձնեց ինձ, որ բերեմ Ծրնև, „Դրօշակ“ի Թանգարանի համար։

Մօտ մի տարի անց՝ նորէն հանդիպեցի սիրելի ընկերոջս Կովկասում։ Եւ նորէն միասին ճանապարհ ընկանք—այս անգամ դէպի Ղարաբաղ, խոր ձորերի ու կուսական անտառների միջից։ Երբ մտանք Գանձասարի անտառը, Սիմօն տեսնելով լեռան վրայ հռչակաւոր վանքը, յուզուեց, էլ չէր կարող համբերել, խնդրեց, որ իսկոյն բարձրանանք վանքը նայելու։ Գնացինք։ Մեր ընկերների մէջ Սիմօնի պէս հետաքրքիր մէկին չեմ պատահել։ Մի քանի ամսից յետոյ նորէն ուղեկիցներ էինք։ Ապա դարձեալ բաժանուեցինք։ Վերջին անգամ Պոլիս տեսայ իրեն. նոր վերադարձել էր Մուշից, Սասունից, իր այնքան սիրած ու գուրգուրած վայրերից, ուր այնքան աշխատանք էր թափել և այնքան զրկանքներ կրել յանուն ժողովրդի յառաջադիմութեան, փոխարէնը յաճախ հալածանք ու պարսաւանք կրելով։

Ցարօնից էլ բերել էր հետը յիշատակներ. երկու վայրի ոչխարի և մի արջի մորթ... Անվերջ չարչարանքներից, հալածանքից ու զրկանքներից յետոյ, երբէք ես նրա բերնից չեմ լսել դժգոհութեան խօսք։ Գուցէ Սիմօնը միակ լինի՝ այնքան անուշադիր դէպի իր սնունդը, հագուստը և այլ պէտքերը։ Շատ էի կուզում, յանդիմանում, բայց նա ժպտում էր ու կարևորութիւն չէր տալիս։

Ծուժկալ էր մանաւանդ իր բարոյական թափառումների ընթացքում։ Կը մտնէի իր սենեակը. ահա նա յոգնած պառկել է, ըստ սովորութեան կողքի վրայ և անբաժան շալը ուսերին։ Ապա կը վերկենար ու թէյ կը պատրաստէր. ծորակը կոտրած մի թէյաման ունէր, արկղի մէջ՝ մի քիչ հաց ու պանիր, կամ մի երկու հաւկիթ, մի թղթի մէջ՝ շաքար ու սուրճ կամ թէյ, ալքօօլի լամպան էլ քովը։

Ցիշողութիւնները առատ-առատ խմբւում են ուղեղիս մէջ, սեղմում են կոկորդս...

Հիւանդ էի, անկողնի մէջ, երբ ստացայ գուժաբեր հեռագիրը։ Ուրբաթ օր գնացք նստեցի դէպի ծովեզերք։ (Բանդրմա), ուսկից ծովով 5 ժամ է մինչև Պօլիս։ 11 ժամ գնալէն վերջ հասնում եմ Բանդրմա. բայց նաւ չկայ։ Սպասեցի միւս օրուան. դարձեալ չկայ նաւ։ Ինթագրելով, որ հէնց կիրակի օր մարմինը պիտի փոխադրէին Կովկաս, մտածեցի, որ անօգուտ է աւելի սպասել. այնքա՜ն տանջւում եմ, որ չկարողացայ վերջին անգամ տեսնել իմ սիրելի Սիմոնին, վերջին անգամ համբուրել նրա անբիծ ճակատը։ Հեկեկացի անվերջ, երեխայի պէս... Հարուածը սոսկալի է։

Եւ այսպէս գնում են մին միւսի ետևից մեր առաջնորդները, մեր անձնուրաց գործիչները. գնում են՝ իրենց տեղը պարապ թողնելով։ Նոր սերունդը կը տա՞ մեզ արդեօք Սիմոններ...

ՎԱՐԴԱՆ

Մանիսա, 12 Նոյեմբեր.

ՔԱՂԵՐԻՑ ՄԷԿԸ

(ԸՆԿԵՐՈՋ ԵՒ ԲԱՐԵԿԱՄԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ)

Վաղուց էր այն... 24 տարի առաջ։ Թիֆլիսի . . տան մէջ հաւաքւել էին մօտ 15 երիտասարդներ։ Բոլորը հայեր են։ Բոլորը խանդավառուած մէկ գաղափարով, միևնոյն ցանկութեամբ, միևնոյն յափշտակող երազով— տեսնել հարազատ ժողովուրդը ազատագրուած թիւրքական լծից։ Կէս գիշերից անց էր, բայց դեռ շարունակւում էին տաք վիճաբանութիւններն ու ոգևորուած ճառերը փոքրիկ, խեղդուկ սենեակի մէջ։ Նորէն ու նորէն կրկնւում էին նրանք։ Մեծ, անհրաժեշտ, ծանրակշիռ գործը միանգամից չի ծնւում։ Շուտով, նա սակայն, ծնունդ առաւ։ Սկիզբ դրւեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, որի նպատակն էր յամառ ու անհաշտ կռիւ մղել Համիդեան կառավարութեան դէմ։ Եւ այդ հիմնադիրների շարքումն էր մեր խորապէս համակրելի ընկերը, Սիմոն Զաւարեան։

Նրա ամբողջ կեանքը սերտ կերպով հիւսուած է կուսակցութեան պատմութեան ու ճակատագրի հետ և սկզբից մինչև վերջ նա խաղաց առաջնակարգ, պատասխանատու դեր, տոգորուած ամբողջապէս կուսակցութեան հոգսերով ու շահերով։ Նա մէկն էր այն, տարաբախտաբար, սակաւաթիւ անհատներից, որոնք մինչև գերեզման հաւատարիմ են մնում երիտասարդութեան տենչանքներին, չեն վհատում, չեն ընկճւում հանրային ու անձնական ձախորդութիւնների բեռի տակ, չեն կորցնում իրենց յոյսը ճշմարտութեան յաղթանակի համար, ճշմարտութեան՝ որ լուսաւորում է նրանց փշոտ ճանապարհը և կենսարար ու յաւերժական լոյսի ճառագայթներով տոգորում է նրանց անհանգիստ, փոթորկոտ ու ազատասէր ոգին։

Աշխոյժ, տպաւորուող, զգայուն ու անկեղծ, սիրող և յաւերժօրէն գործունեայ՝ նա աչքի էր ընկնում մի հազւագիւտ և ուշագրաւ յատկութեամբ—անսահման խստապահանջ էր դէպի իր անձը և նոյնքան զիջող, ներողամիտ էր դէպի ուրիշները. մի բան, որ սակայն չէր արգելում նրան՝ բաց ու համարձակ կուռել մարդկանց յատուկ թուլութիւնների ու արատների դէմ։ Ուղղամիտ և ճշմարտասէր, երբեմն մինչև ծայրայեղութիւն, վերին աստիճանի պահանջկոտ կուսակցական պարտականութեան խնդիրների մէջ... Այդ պատճառով երբեմն անւանում էին նրան „միակողմանի և դաժան ռիգօրիստ“։ Բայց դա միայն մի առանձին թոյլ էր հաղորդում նրա կատարեալ, ամբողջական բնութեան, որի մէջ ժողովրդական բարօրութեան տենչը այն առանցքն էր, որի շուրջը պտտւում էին ազատաշունչ ռազմիկի բոլոր մտահոգութիւններն ու հոգեկան ապրումները։

Կեանքի ծանօթութիւնը և հանրային կեանքի բարդ ու կնճռոտ, հակասական պայմանների մէջ ճամբայ գտնելու հմտութիւնը մեղմում էին նրա մոլեգնոտ ոգին և հնարաւորութիւն էին տալիս գտնելու կուսակցութեան համար շիտակ ուղղութիւնը, առանց խաթարելու սիրած գործի գաղափարային իդեական-պատկերը։

Սիմոն Զաւարեանը ամբողջ էութեամբ նուիրուած էր իր հարազատ հայ ժողովրդին, բայց իր ոգով, կրթութեամբ, իր քաղաքական-հասարակական տրամադրութիւններով նա ռուս տիպար ինտելիգենտ էր, յեղափոխական „Նարոդնայա Վոլիա“ի սաներից։ Հին „Պեռրովկա“ի ուսանող, ջերմ երկրպագու այն աւանդութիւնների, որոնցով կեանք էին մտել „հերոսական շրջանի“ ռազմիկները՝ նա մտաւ „Դաշնակցութեան“ շարքերը, նպատակ ունենալով ուղղել այդ կուսակցութիւնը նոյն ճանապարհով, որ գծել էին իր ռուս յեղափոխական վարպետները 70-ական և 80-ական թուականների։ Իրաւ է, Զաւարեան մենակ չէր այդ գործի մէջ։ Նրա քովին ժայռի պէս կանգնած էր մի չքնաղ և կարող դէմք, նոյնպէս վաղաժամ նահատակուած մի ռազմիկ—Քրիստափոր Միքայէլեանը—որի յիշատակը կ՚ապրէ հայ ժողովրդի մէջ, քանի դեռ կը մնայ աշխար-

հում գէթ մի հատիկ ազնիւ հայ։ Խոշոր են և Զաւարեանի մատուցած ծառայութիւնները։ Նա ունէր լայն եւրոպական կրթութիւն, գնահատել էր սոցիալիստական ճշմարտութիւնը և գնահատելով, ընդունել էր սոցիալիզմը, որպէս վերջին նպատակ իր կուսակցութեան։ Եւ եթէ «Դաշնակցութիւնը» կանգնեց ինտերնացիոնալի առաջ, իբրև ոչ միայն յեղափոխական, այլ և ընկերվարական կուսակցութիւն,—դրան քիչ չնպաստեց Սիմոն Զաւարեանը, որ գործօն մասնակցութիւն ունէր կուսակցական ծրագրի ու տակտիկի մշակման մէջ։

Եւ ահա նա այլ ևս չկայ... Գնո՜ւմ են, լաւերն են գնում։ Ցխուր է, վշտալի է։ Ի՞նչ արած. մահուան առջև ամենքը հաւասարապէս անզօր են։ Բայց պէտք է գէթ կեանքի առջև չխոնարհուիլ։ Նետեցէ՛ք, ուրեմն, այդ կեանքին խիզախ, անվեհեր կռիւը։ Վերանորոգեցէ՛ք այն՝ համաձայն ճշմարտութեան, բարութեան ու գեղեցկութեան։ Դա կը լինի լաւագոյն արձանը մեր թանկագին, նուիրական գերեզմանների վրայ։

Վ. ԼՈՒՆՆԵՎԻՉ

ՀՈՅԱԿԱՊ ՏԵՐՎԻԾԸ

Առաջ եմ բերում եւ յայտնի հայ գրագէտ պ. Ա. Զօպանեանի նառը, արտասանուած Պարիզում, մեր ընկերոջ մահուան խառասնօրեակի առթիւ կազմուած սգահանդիսին *)։ Պ. Զօպանեանի խօսքերը քարզման են այն խորունկ համակրութեան, որ սիրելի հանգուցեալը վաստակել էր նոյնիսկ չէզոք ու հակառակորդ տարրերի մէջ։

Սիրելի հայրենակիցներ,

Սիմոն Զաւարեանը, որուն վաղաժամ մահը ողբալու համար հաւաքուած էք հոս այս իրիկուն, ինծի ծանօթ էր իր գործունէութեան ընդհանուր գծերով միայն։ Բայց ինչ որ ինծի ծանօթ էր՝ կը բաւէր, որպէս զի յարգէի զինքը իբր մեր ցեղին ամենէն թանկագին ներկայացուցիչներէն մին։ Գիտէի ինչպիսի մեծ տեղ մը կը բռնէր ան մեր ազգային կեանքին մէջ՝ իբր ազգասէր գործիչ, իբր հայոց ամենէն հզօր յեղափոխական կազմակերպութեան հիմնադիրներէն և ղեկավարներէն մին, իբր ուսուցիչ, իբր հայ գիւղացւոյն կացութեան բարելաւմանը հոգածու անձնուէր ու հմուտ մասնագէտ. և ան ինծի ծանօթ էր մանաւանդ իբր այն անզուգական Հայը, որու մասին՝ զինքը ճանչցող ամեն հայէ, ինչ կուսակցութեան մէջ պատկանէր, հիացման ու գորովի խօսքեր միայն լսած էի։ Իր անակնկալ մահուան գոյժը ինծի ամենախորին ցաւ պատճառեց, որպէս թէ հին մտերիմ մը կորսնցուցած ըլլայի. զգացի, դեռ իր դագաղին շուրջ մեր ամբողջ ազգին կողմէ հսկայական կսկիծի մը պոռթկումէն իսկ առաջ, թէ հայ ժողովուրդը՝ այդ մեծահոգի գործիչին անհետացմամբ՝ արտակարգ ուժ մը կը կորսնցընէր։ Եւ ահա ինչու պարտք համարեցայ ներկայ ըլլալ այս հաւաքման, զոր դուք, հանգուցեալին կուսակցական ընկերները, կազմակերպած էք իր յիշատակը յարգելու համար, և իբր հայ ազգի անդամ մը՝ իմ ցաւս բերել միացնել ձեր սուգին։

Անգամ մը, մէկ անգամ մը միայն, տեսած եմ Զաւարեանը։ Հինգ տարի առաջ, Պոլիս, Իւսկիւտարի նկարագեղ բարձունքներուն վրայ, ծանօթացայ իրեն, ու ժամ մը միասին մտանք ու խօսակցեցանք։ Այդ միակ տեսակցութենէն պահած եմ խոր ու անջնջելի տպաւորութիւն մը։ Իր ազնուական անուշութեամբ օծուած դէմքը, իր խօսելու, վարուելու եղանակին բնական շնորհն ու եղբայրական քնքշութիւնը, իր զգալու, մտածելու կերպին ակներև անկեղծութիւնը, խաղաղ ու ներդաշնակ ջերմութիւնը՝ զմայլեցուցին զիս. իսկոյն ունեցայ զգայութիւնը՝ գերընտիր հոգիի մը դիմացը գտնուելու։ «Առաքեալ» բառը յաճախ յեղյեղուեցաւ իրեն նկատմամբ՝ իր մահուան առթիւ արտասանուած ճառերուն կամ հրատարակուած յօդուածներուն մէջ. արդ, նկատի ունենալով ամեն եսականութենէ հրաժարած, ինքզինքն ամբողջովին հանրութեան նուիրած այդ քարոզող, ոգևորող, սփոփող, իդէալ սերմանող, մաքուր ու արի հոգիներ դարբնող թափառական ու ներշնչեալ տերվիշի հոյակապ կեանքը, ես ոչ միայն իրաւացի կը գտնեմ այդ մեծ պատուանունին յատկացուիլը Զաւարեանին, այլ՝ իմ այն օրը իրեն հետ ունեցած տեսակցութենէս կրած տպաւորութեան համեմատ՝ կը մղուիմ ճշտել, և ըսել թէ ան կ'ոգէր Աւետարանի առաքեալներուն մէջէն ամենէն քաղցրը և ներհունը, ամենէն երազուն ու դաշնաբարբառը, վսեմ Նազովրեցւոյն ամենէն սիրելի աշակերտը. ան ինծի կը թուի եղած ըլլալ Հայ Յեղափոխութեան սուրբ Յովհաննէսը։ Հաճելի է ինծի համար իմ այդ հին տպաւորութիւնս արթնցընել այս իրիկուն և բերել զայն իբր իմ՝ ալ յարգանքիս մէկ նշանը դնել մեր ողբացեալ վեհոգի հայրենակցին դամբարանին վրայ։

Այն մեծագղորդ յուզմունքին մէջ, որով բովանդակ հայ ժողովուրդը, Զաւարեանի մահուամբ ինքզինքը հարուածած զգալով՝ որպէս թէ ինքն իսկ սրտէն զարնուած ըլլար, անոր դագաղին առջև ծունկի եկաւ ու հեկեկաց՝ ինչպէս խոցուած դառնասուգ մայրիկ մը իր անձնուէր, խնամատար մէկ զաւկին շիրմին հանդէպ, այդ մեծաշուք յուզմունքին մէջ, ես չեմ գիտեր որո՞ւ վրայ աւելի սքանչանալ։ այդ ժողովրդի՞ն, որ այդ ասաքեան խորութեամբ, միահաղունութեամբ ու վեհութեամբ գիտցաւ իր մէկ մեծ գործիչին մահը ողբալ և յիշատակը դափնեպսակել, թէ անհետացող Հարորդին, որ իր հոգւոյն անխառն մաքրութեամբ, իր կեանքին զմայլելի գեղեց-

---

*) Սգահանդէսը կազմակերպուած էր Հ. Յ. Դաշնակցութեան Պարիզի ենթակոմիտէի ձեռքով, տեղի ունեցաւ ամբողջ աշխատաւոր հայ գաղութի ներկայութեամբ։ Խօսեցին Վիկտոր Բերար, Զօպանեան և ընկերներ Շահպազ և Վարանդեան։

կութեամբ կրցաւ այսպիսի յուզմունք մը ներշնչել իր մահովն աղէտաւորուած ժողովրդին։ Բայց ես կը կարծեմ թէ այդ զանազանութիւնը, այդ ընդդիմաբերումը աւելորդ իսկ են արդէն և անճիշտ։ Զաւարեան մը և Հայ ժողովուրդը անհնար է անջատել իրարմէ և մին միւսին հետ համեմատութեան դնել։ Զաւարեան ուրիշ ոչինչ էր եթէ ոչ նոյն ինքն Հայ ժողովուրդը իր բարոյական լաւագոյն տարրերուն մէջ խտացած, համադրուած, խորհրդանկարուած։ Դայրայեղ զգայնութիւն, պարզ ու խորին անկեղծութիւն, ժողովրդասիրութիւն, ազատասիրութիւն, յառաջդիմասիրութիւն, անվհատ ու անխոնջ աշխատասիրութիւն, գաղափարի մը համար յօժարակամ յանձն առնուած չարաչար ոճ անվերջ զոհաբերութիւն, ասոնք էին Զաւարեանի յատկանիշները. և ասոնք չե՞ն միթէ՝ իր բազմադարեան ցաւագին ու սքանչելի պատմութեանն ընթացքին՝ Հայ ցեղին ալ՝ իր բոլոր թերութեանց մէջէն մշտապէս դուրս ցցող, իր հոգիին տիրական գծերը կազմող յատկանիշները։ Բնական էր ուրեմն, որ Հայ ազգը, առանց ոևէ կուսակցական կամ դասակարգային խարութեան, միահամուռ մորմոքով մը ողբար կորուստը մարդու մը, որուն հետ մենէ ոևէ մէկը կրնար այս կամ այն կէտին վրայ գաղափարական անհամաձայնութիւն ունենալ, բայց որուն Հայ մարդու անարատ ու հարազատ հոգիին հանդէպ մեր ամբողջ ազգը չէր կրնար ամենախորին խանդաղատանքէ ուրիշ զգացում ունենալ։

Ողբը, սակայն, որ կը պաշարէ Զաւարեանի շիրիմը, պէտք չէ վհատութեան ձև զգենու։ Մտածել, ինչպէս ոմանք ըսին՝ ցաւի սաստկութեան մէջ, թէ այդ մեծ անհեռացելին տեղը ոչ ոք պիտի բռնէ, մեր ազգին կենսունակութեանը մասին տարակուսիլ է. այդպիսի ներբող մը, որ, մեծցնելով հանգուցեալը, կը փոքրացնէ իր ազգը, տհաճոյ պիտի ըլլար իրեն իսկ՝ Զաւարեանին, եթէ կարող ըլլալ լսել ինչ որ այժմ կ'ըսուի իր մասին. անշուշտ, Զաւարեանի պէս գերազանց մաքրութեամբ հոգիներ հազուագիւտ են, ոչ միայն մեր, այլ ոևէ ազգի մէջ. բայց պէտք է մենք հաւատանք թէ մեր ցեղը՝ որ դարերէ ի վեր ամբողջ շարք մը տուած է այդպիսի անձնուէր ու վճիռ հոգիներու, նորէն կարող է տալ, և այժմ իսկ ան ունի իր ծոցին մէջ այնպիսիներ, որ պիտի յառաջ տանին գործը, որուն ան լծուած էր։ Ողբալ Զաւարեանը, յարգել իր յիշատակը, անմոռաց պահել իր անունը, բայց չվհատիլ, հետևիլ իր օրինակին, և իր գործը շարունակելով մեծարել իր անունը, այս պէտք է ըլլայ Հայ երիտասարդութեան պարտքը անոր շիրմին հանդէպ։

Կան տիպարներ զոր գրականութիւնը կըստեղծէ, և ժողովուրդները՝ հմայուած՝ այդ մտացածին տիպարները կ'իրականացնեն. այդպէս՝ Բաֆֆիի հերոսները. բայց կան ալ մարդիկ, որ իրենք իսկ՝ իրենց հոգիին բնիկ զօրութեամբ, իրենց կեանքին ինքնաբուխ գեղեցկութեամբ, տիպարի մը բարձրութեանը կը հասնին ու ներշնչարան կը դառնան գրագէտին. այդպէս՝ մեր հին Վարդանը, կամ մեր երէկուան Աղասին, որոնց մին ներշնչեց Եղիշէն ու միւսն՝ Աբովեանը։ Այս կարգի մարդոցմէն էր Զաւարեան, որուն դէմքը կոչուած է Հայ քնարը ոգևորող գիւղացներգական դէմքերէն մին դառնալ։ Անոր համար, այսօր, մեր ազգին բոլոր հատուածներուն ու բոլոր հաստատութեանց հետ, Մեսրոպներուն, Խորենացիներուն, Եղիշէներուն ձեռքով հիմնուած, Մխիթարներուն, Աբովեաններուն, Ալիշաններուն շունչով վերակենդանացած ու ճոխացած Հայ Գրական Ցունը ևս սգաւոր է. անոր սուգն ալ է, զոր կը համաձակիմ, իմ անձնական վշտիս հետ, բերել այս իրիկուն ձեր մեծարանքի և ցաւի արտայայտութեանը միացնել։

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

ԳԵՂԵՑԿԱԳՈՅՆ ՊՍԱԿԸ

—

«Յիշատակն Արդարոց»...

Ինչ որ Սիմոնին մէջ՝ նկատի առնուած իբրև հասարակական գործիչի, կը կազմէր, ըստ իս, ամենէն թանկագին, ամենէն անստգիտ յատկութիւնը, և, իբրև գերագոյն յատկանիշը անոր հզօր նկարագրին, կը տիրապետէր իր բոլոր միւս արժանիքներուն, այն անգրգռելի, անընկճելի և անխոնջ թափն էր՝ որով գիտէր ան սանձահարել, ամեն ատեն և ամենուրեք, ի գին՝ յաճախ՝ ամենագժուարին բաղխումներու և անձնական սրտամորմոք նուաստացումներու ու տառապանքներու, մեր շարքերուն մէջ անհատական շեղումները և տկարութիւնները դէպի փառասիրութիւն ու պատուատենչութիւն։

***

Քաղաքական և յեղափոխական կազմակերպութիւնները, առհասարակ բոլոր այն խմբակցութիւնները, որոնց միակ շաղկապող ու շարժող ուժը բարոյական է, էապէս,—ինչպէս բարոյական է նաև անոնց հետապնդած նպատակը՝ որ մարմնաւորուած համեմատաբար շօշափելի մէկ քանի միտքերուն կը ներկայանայ իբրև Իդէալ-Զանը դէպի իրեն ուղղողներուն,—վերջապէս հասարակական կեանքի մէջ ապրելու, գործելու և զարգանալու կոչուած բոլոր մարդկային հաւաքականութիւնները, որոնք կառուցուած են գաղափարի տիրոյթին մէջ, այլասիրութեան, իրերասիրութեան և արդարութեան հիմունքներուն վրայ, ենթակայ են, բոլո՛ր, առանց բացառութեան և տևականօրէն, վերին աստիճանի կործանարար ու աղէտաւոր վտանգի մը՝—այն է պառակտիչ, փառքի ու դիրքի ցանկութեանց անակնկալ պոռթկումը

ներու ամենօրեայ հնարաւորութիւնը՝ այդ խմբակցութիւնները կազմող անգամ անհատականութիւններուն հոգիներուն մէջ։

Եւ այս վտանգը, այնքան աւելի ծանր է իր էութեամբ ու եղերական հետեւանքներով, որ անոր ծագման ու ծաւալման գործը, պրոցէսը, տեղի կ'ունենայ երկու անողոք, գրեթէ գիտական օրէնքներու ղեկավարութեամբ։

Ա.—Պատուի, փառքի ու դիրքի սէրը կը բռնկի և կ'արծարծի հասարակական մարդուն կուրծքին տակ շատ անգամ անկախաբար անոր ներքին, ենթակայական արժագրութիւններէն և կ'ուռճանայ ան, ընդհանրապէս, արտաքին պայմաններու ներգործութեամբ և նպաստաւորումով։

Բ.—Պատուի, փառքի ու դիրքի սէրը, իբրև վտանգ բարոյական նուաճումներու ձգտող հաւաքականութեան մի ծոցին մէջ, փոխանցիկ է, տարափոխիկ, ինչպէս ո՛ւեէ համաճարակ, ա՛յնքան որ, երբ անոր թոյնը կաթի անգամ մը գաղափարի ու անձնազոհութեան անունով ճամբայ ինկած նոյնիսկ ամենէն մաքուր ու բիւրեղացած հաւատացեալներու բանակին մէջ, չի բաւականանար անփառունակ հունձերով, այլ կը վարակէ ան տակաւ ամենքը, կը զգեստէ հեզհետէ ինչ որ կայ աննիւթական ու հարազատ ու անկեղծ ա՝ոնց սրտին խորքը և չի յագենար մինչև լայնածաւալ չափէ բոլոր հոգիներուն վրայ տենչանքի, վայելքի, նախանձի ու կեղծիքի բօթաբեր շղարշը։

Այսպէս է բարոյական-գաղափարական խմբակցութեանց համար մեծութիւնը պատուի, փառքի ու դիրքի ցանկութիւններու վտանգին։ Ան ծնելով գրեթէ միշտ նոյնինքն ժողովուրդէն, հասարակութեան մէջքովը ու ուռճանալով միջավայրին, նոյնիսկ երբեմն զինակիցներուն ներգործական թէ կրաւորական մեղսակցութեամբը — կը տարածի այնուհետև և յաւատ ժանտախտին պէս ընկերէ ընկեր, խումբէ խումբ ու կը ծծէ, կը պարպէ ամբողջ ներքին կենսունակութիւնը, ողնաշո՛ւեը հաւաքական մարմնէն, որուն վերջնական փլուզումը, անկումը, կը մնայ, անկէ ետքը, այլ ևս սոսկ ժամանակի խնդիր...

***

Սիմոն Զաւարեանը մեր մէջ այդ ահարկու և աննեղրող չարիքին ոչ նուազ կատաղի և անագորոյն թշնամին եղաւ։ Սիմոնը, այո՛, ի գին, յաճախ, անհնարին կնճիռներու և անձնական խորունկ տագնապներու խարազանեց ու խարազանեց, անդադար և ամենուրեք անողորմ վտանգը, այդ ճշմարիտ սուրը դամոկլեան, խարազանեց զայն իր խօսքին և օրինակին զօրութեամբը, մեր շարքերու ամենավարին, ամենահամեստ խաւերէն մինչև ամենաբարձր ղեկավար շրջանակներուն մէջ։ Եւ որ ամենակարևորն է, այն շարունակական կենսատու և մաքրագործող հովանաւորումին ընթացքին, զոր կատարեց Սիմոնը իր կեանքի ամբողջ ամրողութեանը՝ մեր կուսակցութեան ծոցին մէջ, շնորհիւ իր անգնահատելի ազնուութեան երբէք չունեցաւ ի նկատի սխալողներու անձնաւորութիւնը և վարակուողներու անհատականութիւնը, այլ ընդմիշտ մնաց համոզուած քա՛ջ, որ անկումին զոհերը չեն նոյնքան պատասխանատու և յանցաւոր իրենց մեղքին, որքան նոյնինքն բնոյթը այն գործին, որուն մէջ կապրին ու կը շարժին, և զրկանքները, որոնց դատապարտուած են տակալ — և հետևաբար եղաւ ամեն առթիւ ներողամիտ դէպի անձերը, հանդարտ բարկութենէն յետոյ, հեզահամբոյր դատաստանէն անմիջապէս ետքը։ Սիմոնը երբէք, իր այս ուղղութեամբ ջանքերը, չձգտեցաւ ընդարձակել արի ու բարի վիրաբոյժի մը իրաւասութեանց սահմաններէն անդին։

***

Ահա թէ ինչ տեսակէտով գլխաւորաբար ըստ իսկ, մենք շա՞տ բան, գրեթէ անչափելի՞ բան կը պարտինք մեր ընտիր, ընտիր Սիմոնին։

Զէ՞ որ մենք շատ անգամ, կը յիշենք ինքնաբաւական գոհունակութեամբ, մեր առանձնական խոկմունքներուն կամ մտերիմ ընկերական շրջանակի խօսակցութեան ատեն, թէ մեր կազմակերպութիւնը թերևս ըլլալով միակ բացառութիւնը մեր և շրջակայ միջավայրերուն մէջ ապրող ու գործող նման կազմակերպութեանց շարքին, կարողացաւ մօտ քառորդ դար համեմատաբար լաւագոյնս պահպանել անխախտ Հաւաքականութեան հետապնդութիւնը անհատներուն վրայ և Սկզբունքներու բարերար ու արգասաւոր իշխանութիւնը հարկադրել հաւանական սայթաքումներու զառիթափէն մը մը իջնալու փորձող մեր ընկերներուն։

Այդ իրողութիւնը ահա մենք կը պարտինք զգալի չափով անզուգական Սիմոնին։

Այդ պատճառաւ ալ, ամենագեղեցիկ պսակը, զոր մենք կրնանք դնել Զաւարեանի թարմ շիրիմին վրայ, չպիտի հիւսուած ըլլայ ոչ աշունի մանիշակներէ, ոչ գարնան անթառամներէն, և ոչ իսկ մեր արտասուքի կաթիլներէն — այլ մեր՝ իր ընկերներուն և աշակերտներուն ուխտով՝ մնալու յաւէտ հաւատարիմ անոր երազներուն, անոր պարզութեան, ընկերասիրութեան և կարգապահութեան պողտատեայ սկզբունքներուն։

Բ. ՇԱՀՊԱԶ

ԶԱՒԱՐԵԱՆԻ ԾԻՐՄԻՆ ԱՌՋԵՒ

Սիրած մեռելները միշտ ալ ողջ են։

ԴՕՒԼ։

Լա՞լ արդեօք։ Մեռելները շատ են ու արցունքները քիչ։ Լալ մեր գարաւոր արիւնոտ զոհերը — տասնեակ հազարներով. լալ հայկական ազատամարտի ճամբուն վրայ ինկած բազմաթիւ հերոսները, թէ մեր անպատուուած մայրերն ու քոյրերը... Մայրե՛ր, որոնց երկունքը լացով ու եաթաղանով պսակուեցաւ։

Մեր տարաբախտ երկնքի տակ, իւրաքանչիւր զոհ թանկագին կորուստ մ'է, մանաւանդ այն ժամանակ, երբ դեռ անպատուութեան արատը չէ սրբուած մեր ճակատէն, երբ տակաւին հայ երեխաներու կաթը սարսափութեան թոյնով շաղախուած է ու երբ մեր քոյրերը պիղծ շրթունքներու տակ կը խամրին... Ա՜խ, գերեզմաննե՜ր գերեզմաննե՜ր մեռելներու, գերեզմաննե՜ր ողջերու և անարգուածներու...

Զաւարեանը մեռած... Մի մեծ գերեզման ևս։ Եւ մի ահագին ճեղքուած՝ դաշնակցական բերդին պարիսպներուն մէջ...

Տարաբա՜խտ ընկեր։ Ո՞վ կարողացաւ չափել քու հոգու անհասանելի բարձրութիւնը, երբ Տարօնի ապերախտ հողին վրայ, զինուած ուղղամտութեան ու անձնուիրութեան դրօշով, մաքառեցար խաւարի, տգիտութեան ու վատութեան դէմ, երբ բովանդակ կեանքդ սպասս դրիր՝ տարածելու համար լոյս ու հաւատք։

Գնա՛ և մոռցի՛ր կրած վշտերդ։ Ներէ՛ այն ժողովրդին, որու հոգու ստրկութիւնը դրոշմուած է եղեր գարաւոր բռնակալութեան խարանով։

Գնա՛, ըսէ Սերոբներուն ու Զաւուշներուն, որ տակաւին մեր սրտերը արիւնոտ են, բայց որ սերունդ մ'ալ կայ, ձեր վշտով ու վրէժխնդրութեամբ տոգորուած, սերունդ մը, որ ուխտած է շարունակել ձեր փշոտ ու արիւնաներկ ուղին։

Գնա՛ այս ապերախտ հողէն, ապագայ արշալոյսը երազելով։ Փոքրիկ հողակոյտ մը ալ քեզի, այն ազգէն, որ իր մեռելները երբէք չգիտցաւ ամփոփել տաճարի մը մէջ։ Փոքրիկ, անշուք հողակոյտ մը քո հսկայ հոգուն, նման այն գերեզմաններուն, որոնց ուխտի կերթայ նոր սերունդը։ Գերեզմաննե՜ր, միշտ անզարդ, միշտ անծաղիկ, բայց յաւէտ պաշտելի և գուրգուրուած...

Ա. ՋՆԴԻ

Կարին

ԻՐԱՒՈՆՔ

ԶԱՀԱԿԻՐԸ

ՍԻՄՕՆԻՆ

Եւ առաքեաց առ իս մի ի սրովբէից եւ ի ձեռին իւրում ունէր կայծակն զոր առեալ ունելիսօք ի սեղանոյ անտի. եւ էր մերձեցոյց ի բերան եւ ասէ. ահաւասիկ մերձեցաւ այդ շրթունս քո եւ հանցէ զանցօրէնութիւնս քո եւ զմեղս քո սրբեցէ ի քէն... երթ եւ ասա ց՛ժողովուրդն ց՛այն՝ լսելով լուիցիք եւ մի՛ իմաստիք եւ տեսանելով տեսցի՛ք եւ մի՛ գիտասցի՛ք. զի բանձրացաւ սիրտ ժողովրդեանդ այդորիկ. եւ սկսանցիցէ իւրեանց ծանունս լուան եւ զաչս իւրեանց կապուցցին զի մի երբէք տեսանիցեն աչօք։

(ԵՍԱՅԻ. Դ. Զ)։

Համատարած խաւար էր և ճամբորդը կանգ առաւ յոգնած։

Նա այնքան էր քայլել... դալուկ ճակատից քրտինքի կայլակները սրբեց ու խորը շունչ առաւ։

Նա ոտաբոբիկ էր ու գլխաբաց. անխնամ, երկար մազերը գիշերային հովն էր ծեծում և ծաղիկները լեռնալանջի մեղմիւ շոյում էին նրա մաշուած գարշապարները։ Խորունկ աչքերի մէջ մի ծանր ու հպարտ փիշտ էր լողում և տեսողի իր հայեացքը հեռուն մի երազ էր փնտրում, որ ասես նոր ծածկուեց մութ հորիզոնում։ Ոսկրոտ թիկունքը կռացած, ուսերը քաշ մի անտեսանելի բեռի տակ, նա յենուել էր երկաթէ ցուպին, որի ծայրին պլպլում էր կախարդական մի բոց համատարած խաւարի մէջ, որպէս անհունից թարթող մի դժգոյն աստղիկ, որպէս մոլորուած շող անծանօթ արևի։

Ու շուրջը խաւարը հզօր էր դեռ, „ադամամութն էր“ լոյսի ու խաւարի յաւիտենական պայքարը երկնող արշալոյսի համար։ Զահի բոցը նւաղում էր նւաղում և ճամբորդը շատ էր յոգնած։

Նա այնքան էր քայլել կեանքի դժնդակ, փոշոտ ճամբաներով, անլոյս, խեղդող խաւարի մէջ բարձր տանելով իր կախարդական ջահը։

Ո՞վ է անքում այսպէս ցաւագին այն մօտիկ ձորում։

Այն վիրաւոր եղնիկն է տնքում ճամբից ոչ հեռու։

„Իմ ոտների տակ երբէք միջատ չմեռաւ“, մտնչաց նա և աչքերը թաց-թաց։ Ապա հայեացքը դէպի հորիզոնը դարձրեց, ուր արշալոյսն էր երկնում, նայում էր այնպէս, ինչպէս մայրը կը նայէր իր սիրասուն, մինուճար զաւակի ճամբին։

Եւ արշալոյսը չկա՞ր, չկա՞ր.....

„Ադամամութն էր“, այն թանձր, խորունկ խաւարը, որ լուսաբացի շեմքին կարաւաններ է մոլորեցնում և անդունդները գահավիժում, պայծառ հաւատքը դարձ-

նում գիւական պատրանք և լոյսին ակնդետ հոգեվարք հիւանդի կրծքից ցաւագին անէծքը խլում։

Մունջ, լայնածաւալ դաշտը ներհում էր լուսաբացի իր խորունկ ներհը. հարթավայրում, ձորերում գիւղերն էին հանգչում, ոլորպէս երեսնիվար ընկած վիթխարիներ և լուռ անտառը լեռնալանջին սևին էր տալիս, որպէս մի մութ երազ երկար գիշերի։ Եւ ճամբան անծայր ու քարքարոտ, որ կորչում էր խաւարի մէջ ու հեռուն, շատ հեռուն, թանձր ու ծանր ստուեր՝ թուխս նստած էին գաղտնիքի վրայ։

Ականջ էր դնում ճամբորդը... Ո՛չ մի ձայն. միայն վիրաւոր եղնիկն էր հեծեծում ժամակայ ձորում. մայր երկիրը թրթռում էր ոտների տակ ու սառը հովը խառնում էր մազերը, շշնչում ականջին հեռաւոր դաշտերի, ձորերի, կորած խրճիթների հին անվախճան հէքիաթը և ծաղիկներն օրօրում էին իրենց գլխիկները, քնքշօրէն համբուրում էին նրա տանջուած գարշապարները իրենց թաց շրթունքներով։

Ճամբորդը պրպտեց հորիզոնը ու նրա յոգնած գլուխը անյուսօրէն կռացաւ աջ բազկին. նա խորհում էր իր կարմիր խոհերը, որոնց վրայ միշտ վառ էր պահել իր այս կախարդական ջահը, որի բոցն այժմ քամու ուժեղ հեքի տակ նուազում էր, ցոլքերը խեղճանում էին ու մոտ էին հանգչելու։

Նա գլուխը բարձրացրեց, ջահին նայեց.

„Ջահ, իմ բոցո՛ն ընկեր, փայլ տուր, լուսաւորի՛ր այս ճամբան, չէ՞ այս գիշերն անվախճան չէ, չէ՞ արշալոյսը վերջապէս պիտ ծագի“... մրմնջում էր նա։

Հովը հեկեկաց ու քրքջաց հեռուում։

Ջահի բոցը թուլանում, կծկւում էր, նրա ցոլքերը խեղդւում էին խաւարի մէջ։ Ու ճամբորդի գլուխը նորից քաշ ընկաւ բազկին, ջահի բոցն այժմ լուսապսակ էր կազմում նրա ճակատի շուրջը ու ժպտուն պատկերներ, խռներամ թէռների պէս, պաշարեցին նրա տանջուած երևակայութիւնը։ Իր հին վճիռ երազն էր, քնքոյշ՝ որպէս մանկան առաջին ժպիտը, խնկաբոյր, որպէս կոյսի առաջին համբոյրը, որ համատարած խաւարի մէջ մի յեսին թափով փթթեց նրա առառապած հոգում։ Ահա արևն էր բարձրանում ոսկեշող երկնքում, գարնանային պերճ արևը ու նրա վառ ցոլքերի մէջ, որպէս ոսկէ ծովում ալեծածան դաշտն էր ծփծփում։ Գեղանի աղջիկները եղնիկների կայտառ երամով անցնում էին ցօղազարդ հովիտներով, աչքերի մէջ սէր ու կեանք, կրծքերը թրթռուն, հոգիների մէջ շող ու ցոլք ու նրանց երգը գալարուն ու քրքիջը խանդավառ՝ հնչում էին ձորերում կախարդիչ ելևէջներով։ Հնձուորների հուժկու թիկունքները կռանում ու շոկւում էին ջլուտ բազուկների թափի հետ, գերանդիները զրնգոցով բարձրանում, համբուրւում էին արևի ցոլքերի հետ, բեկբեկուն փայլ արձակում ու կրկին սուզւում խոտ ու ծաղկի բուրաւետ թանձրութեան մէջ։ Հեռուն՝ հաստավիզ եզն ու գոմէշը ամոլ-ամոլ քաշում էին գութանը, մաճկալը՝ դէմքը հողագոյն, աչքերն արևով լի, լիաթոք շնչում էր թարմ ակօսի բոյրը, պատանի հօտաղը, լծան վրայ նստած՝ հայրենի „հօրովէլի“ վճիռ ու առնական հնչիւններն էր արձագանքում ու մայր երկիրը իր յուռթի կողերն էր բաց անում քրտինքն ու սերմն ընդունելու համար։ Հօտերը հանդարտ բարձրանում էին լեռն ի վեր, ինչպէս ոսկեզօծ մշուշը վաղորդեան, և հովւական սրինգի հնչիւնները ծաղիկները համբուրելով՝ գնում էին լեռնակատարների ջինջ հովերի հետ համբուրելու։ Ու ողջ դաշտավայրը իր խինդ ու ժպտով, իր խոտ ու ծաղկով, արտ ու արօտով, հօտ ու հօտաղով, մի վիթխարի օրհներգ էր, որ թրթռում էր արևի տակ վաստակի, արդարութեան ու ազատութեան լուսաշող ատենուն։

Եւ հեռուն, գիւղն էր, ճերմակ, ժպտուն տնակները ծառ ու ծաղկի մէջ կորած, ուր յարկերի տակ արցունքն էր չորացել, երջանկութեան ու խնդութեան ժպիտն էր փթթում։ Մանուկները խռներամ ու կանչուռտոցով շտապում էին դէպի դպրոց, ծերուկ պապը ջրում էր ծաղիկները, հարսն ու աղջիկ գործում էին ու երգում. մայրը վաստակաւորների սեղանն էր պատրաստում։

Աշխատանքի իրաւունքն ու պաշտամունքն էր թագաւորում ամեն կողմ, թշուառ, հիւծած վաստակաւորը վերջապէս շակել էր իր թիկունքը, պորտաբոյծ ու լկաի գիշատիչների, իր արիւն-քրտինքի ծնողների լուծն էր փշրել և այժմ լեռները թնդում էին նրա մուրճերի յաղթ հարուածներից, մայր երկիրը բաց էր անում նրա առաջ իր բեղուն ծոցը, նրա ճիգերը պսակելու, նրա կեանքը դրախտի վերածելու համար։

Կախարդի՜չ, ցնորական երազ, իր կեանքի մեծ երազը, որի յետևից վազեց նա ողջ կեանքում, որպէս մանուկը խայտաբղէտ թիթեռի յետևից. գիւթական արշալոյս, դէպի որը սլացաւ նրա հոգին, որպէս գառնուկը դէպի իր մօր ստինքները։

Եղնիկը տնքաց վերստին, երկար ու ցաւագին ու ճամբորդը գլուխը բարձրացրեց, նայեց արևելք, ուր այդ արշալոյսը պիտի ծագէր. ի զո՞ւր. հեռուն դարձեալ խաւար էր, իսկ իր ջահը պլպլում էր աւելի թոյլ, աւելի նուազ. նրա դալուկ բոցը թարթում էր օրհասական ճիգով ու մոտ էր հանգչելու։

„Մի՞թէ չես հասցնի ինձ արշալոյսին, ո՜վ իմ աստանդական կեանքի լուսաշող ընկեր“...

Ու հովը շշնջաց.

„Չի հասցնի, չի, չի, չի“...

Ճամբորդի ծունկերը դողդողում, թուլանում էին, հեքը դառնում էր ընդհատ ու խուճապոտ, ու նա զգում էր, ինչպէս իր կենսական յեսին զօրութիւնը կամացուկ հաւաքւում է կրծքի տակ, թրպրտում. պատրաստւում է խոյս տալ, որպէս թռչունը, որ լքում է իր մաշած ու

աւեր բուներ։ Ու յետին անգամ թրթռաց ջահը հոգեվարքով, ու յետին անգամ ջահակիրը նայեց հեռուն, ուր թանձր էր խաւարը, ապա կամացուկ ծնկները ծալուեցին սառը, խոնաւ հողի վրայ։

„Լսի՛ր, մա՛յր երկիր, մրմնջաց նա, քո բարի, քո բեղուն կրծքից ծնունդ առայ ես մի օր, որպէս քո թախծոտ, յաւիտենական ժպտի մի ցոլքը մոլորուած. քո կարեկից ու վճիտ հոգին իմ փխրուն մարմնի մէջ դրիր և քո յուռթի, շքեղ ստինքներից արդարութեան, ազատութեան ու ճշմարտութեան կաթը ջամբեցիր ինձ։ Քո արգանդում եռացող կրակի մրրկի մէջ սիրտս մխեցիր ու տիեզերական ցաւի անդունդը բաց արիր իմ երազուն աչքերի առաջ. քո նուիրական քրտինքի գաղջ ամպերի մէջ իմ մանուկ էութիւնը թրթռաց, ինչպէս նորածինը խանձարուրի մէջ։ Դու կամեցար, մա՛յր, որ բիւրաւոր խեղճերի, անճարների, հալածական թշուառների բեռը ծանրանայ իմ ցաւատանջ թիկունքին ու նրանց հառաչանքի ու բողոքի արձագանքներով աշխարհի անիրաւութեան երկաթ դռները բաղխեմ արդարութեան անունով։

„Եւ ես այնպէս ապրեցի, վկայ է այս ջահը, որ դու դրիր իմ ձեռքը, որպէս դու կամեցար մա՛յր. երկրէ երկիր անցայ, ուր համատարած ու անողորմ իշխում էր Չարիքը, ուր իրաւունքն էր ցեխերի մէջ տրորուած, արդարութիւնը՝ հալածական խեղճութիւնը հզօրների ժանիքների տակ արիւնլայ։ Քրտնաթոր աշխատանքը տեսայ թիկունքը վիթխարի բեռի տակ կռացած և կատազի քաղցը վիշապի պէս սրունքներին գալարուած։

Եւ ո՛չ մի թշուառի հեծեծանք իզուր չ'եկաւ իմ հոգին խռովելու և ո՛չ մի խրճթի դուռ, որի յետևում անյոյս ցաւն էր մռնչում, իմ առջև փակ չմնաց։

Խաւար ու ցուրտ յարկերի տակ ես սիրտս վառեցի, որպէս լուսաւոր ջահ և հոգուս կրակը ցանեցի խեղճերի դողդոջուն մարմինները ջերմացնելու համար։ Իմ խօսքը հալած երկաթի կաթիլներով տրտում ու այրի հոգիների մէջ ընկաւ, ես արդար ցասումի հրդեհը վառեցի այնտեղ, ուր սառնամանիքն էր իշխում։ Դաժան, նզովուած խիղճերի մէջ հայեացքիս սառը պողպատը մխեցի և ժպտուն կեղծիքի և լպիրշ նենգութեան դիմակները շորթեցի նրանց բիւրաւոր զոհերի առաջ։ Վաստակաբեկ ու քաղցած աշխատաւորի կռացած թիկունկը շտկեցի և նրա հնազանդ հայեացքի մէջ աստուածային կայծը դրեցի։

„Ազատութեան ու արդարութեան արշալոյսին ես ընդ առաջ գնացի այս ջահը վառած և եղունգներովս առապարների քարերը չանգռեցի իրաւունքի ճամբան հարթելու համար. թունոտ իժերն իմ կրունկները լիզեցին և ցուրան ու մրրիկը այս տառապած ճակատը ծեծեցին։

„Եւ այժմ ուժասպառ՝ ահա ծունկի եմ քո առաջ մայր երկիր, որովհետև այս ջահը, ուր քո տուած բոցն է վառուում, այլ ևս անզօր է ինձ առաջնորդելու այս խաւարի ճամբաներով և գիշերը վերջ չունի և արշալոյսը հեռու է դեռ։ Ցե՛ս ես յոգնած եմ, մայր, յոգնած եմ, որպէս իմ ջահը կախարդական, որ ահա հազիւ պլպլում է ու մոտ է հանգչելու։ Ա՛ռ ինձ ծոցդ, մայր ու հանգիստ տուր, տես, ես շատ եմ յոգնած և քո զաւակն եմ, մայրա՛»։

Եղնիկը վերջին անգամ տնքաց ու լռեց... Հովը խառնեց ծաղիկները, որոնք մեղմ շշուկով կրկնեցին երկրին յոգնած ճամբորդի աղերսը և երկիրը թրթռաց, լուռ ու խոհուն։

„Տես, մայր իմ, ահա ծունկի եմ քո առաջ և ջահս հոգեվարք՝ ձեռքիս մէջ է դողդողում և կեանքս քամուեց, քամուեց, կրծքիս տակ ծարեց հազիւ թրթռում է, ինչպէս և ջահս. անզօր եմ ես և յոգնած, բաց գիրկդ, մայր և տուր ինձ հանգիստ, թող որ հանգչե՛մ, հանգչե՛մ, հանգչե՛մ...

Եւ ծաղիկները խշրտացին, սգաւոր քոյրերի պէս գլուխները կախեցին, բուրաւէտ ցօղը ցանեցին նրա խոշտանգուած ոտներին ու լացեցին իրենց խորունկ արցունքները հովը քրքջաց անմտօրէն, ապա թափանցեց այրերը ու նրա անմիտ բրքիջը սրտապատառ ու խելայեղ ողբ դարձաւ, որից լեռները դղրդացին. հոգեվարք ջահը յանկարծ բռնկուեց մի գերեզմանային փայլով, նրա շողերի մէջ լեռ ու դաշտ դողդողացին մի վայրկեան, ապա ճամբորդի ձեռքից վայր ընկաւ ջահը ու մարեց, մայր երկիրը տնքաց երկար ու ցաւագին, բացեց իր գթոտ ծոցը ու ներս առաւ իր յոգնած, տանջուած աստանդական զաւակին։

Արշալոյսը հեռու չէր. . . . . .

. . . . . .

Լուսաբացին հովիւները հեռաւոր լեռնալանջի ծաղիկների մէջ ընկած մի անօրինակ ցուպ գտան երկաթէ և նրա ծայրին մի այրուած սիրտ, որ դեռ մխո՞ւմ էր մխո՞ւմ էր...

ՏԱՐԱԳԻՐ

ԽԱՐԱՁԱՆՈՂ ՄԱՐԳԱՐԷՆ

Մայրը սրբում էր աչքերի արցունքները, որպէս չի նորէն ու նորէն տեսնէ հեռուում անհետացող կառքը, որ տանում էր իր միակ ուրախութիւնը, իր կեանքը, իր անդրանիկ-զաւակը։

Գնում էր նա դէպի հեռու հիւսիս, գնում էր սովորելու։ Մնաս բարևին՝ մայրիկը հազիւ հազ պահում էր ոտքերի վրայ, հազիւ հազ զսպում էր իր յուզմունքը։ Հէր ուզում նա վերջին վայրկեանին տխրեցնել, վիրաւորել մեկնող զաւակի զգայուն սիրտը։

Բայց երբ մենակ մնաց, ազատ թափ հաղորդեց յորդ զգացումներին և արտասուքը, ջերմ ու խոշոր կաթիլներով սկսեց գլորուել նրա տակաւին երիտասարդ

թշերի վրայ։ Այնքա՜ն այլազան մաքեր էին թափառում գլխի մէջ և նրա մայրական իմաստուն սիրտը մատնում էր ինչ որ զարհուրելի մի նախազգացում։ Նա բաբախում էր սաստկութեամբ, արիւնւում էր և նվվում յուսահատօրէն։

Տրոփում էր և մեկնող պատանու սիրտը։ Նրա մէջ ևս պայթարում էին այլազան, հակասական մաքեր, մերթ պայծառ ու ժպտուն, մերթ մռայլ, ահաւոր։ Մի բան սեղմում էր կոկորդը, զարնում էր գլխին և արցունք էր առաջացնում։ Նա դեռ զգում էր իր կրծքի վրայ լղարիկ կնոջ գլուխը, որ ինչ որ բան էր փսփսում մեաս բարևին և աղօթում էր նրա համար Աստուծուն։

Արցունքոտ աչքերով դիտում էր նա բնութեան իրարու յաջորդող տեսարանները։ Աստուածային աշխարհի գեղեցկութիւնը կամաց-կամաց դիւթում էր նրան։ Ու նա հետզհետէ դուրս էր մղում իր յիշողութիւնից սիրող մօր պատկերը, ընտանեկան օճախը և այն բոլորը, ինչով ապրել էր նա մինչ այն և նրա քնքոյշ սիրտը լցւում էր ազնիւ տենչերով ու երազներով։

Կառքը մօտեցաւ այն տեղին, ուր միանում է Կուր գետը Արագւայի հետ։

Ձինջ, արծաթափայլ Արագւան, յաւիտենօրէն ժըպտուն, կայտառ, աղմկայոյզ, խոլ կատաղութեամբ մխւում էր ջրառատ, մռայլ ու դաժան Կուրի ալիքները և կարծես հեգնելով ճանապարհ էր բաց անում այդ մութ քաօսի մէջ—յստակ, լուսեղէն ճանապարհ։

„Լոյսի սկզբունքը կուլ գնաց խաւարին“ — մտածեց երիտասարդ ուղևորը։ Մի մութ անհանգստութիւն պատեց նրան, մի բան, որ գուշակում էր հիասթափութիւն և կորուստ լոյսի ու հոգեկան բերկրանքների. սիրտը կսկծաց։ „Մի՞թէ այսպէս պիտի լինի և իմ կեանքի մէջ։ Մի՞թէ ես էլ պիտի կորչիմ, պիտի լուծւիմ մարդկային ընդհանուր կեանքի ալիքի հետ“։

Մտքերը պաշարեցին նրան, տխրեց և գլուխը քաշ գցեց։

Շուտով սակայն նորէն սթափւեց։ Ամբոստ, մոլեգնոտ ոգին արծարծում էր նրա մէջ պայքարի, կռւի ծարաւ։ „Ո՛չ, չեմ զիջի ես կեանքի գրոհի առջև, չե՜մ թողլ տայ, որ մռայլ, տղմոտ ալիքները խեղդեն ինձ. ես դեռ կը կռւե՜մ նրանց դէմ“...

Եւ թուխ ու բարի աչքերը պսպղացին հրեղէն փայլով և նորէն այդ աչքերը ուրախ էին, յուսավառ։

***

Կեանքը եռում էր Մոսկւայում։ Պետրոսեան Գիւղատնտեսական ճեմարանը մասնաւորապէս յայտնի էր այն ժամանակ, որպէս բոյն գաղափարական ու ռազմատենչ երիտասարդութեան։ Բոլոր շրջաններում, համալսարանական բոլոր ժողովների մէջ կը տեսնէինք կարճահասակ, նիհար, հարաւային բնակչի տեսքով մի ուսանող, կոշտ ու արագ շարժումներով. աչքերը սև, մեղմ ու բարի, փայլում էին ասպղերի պէս, երբ դէմքը փոթորկւում էր տաք, կրակոտ ճառերով։

Հայկական լեռների այդ հարազատ զաւակը այն ժամանակ զգում էր ինքզինքը, որպէս կոսմոպոլիտ, համաշխարհաքաղաքացի և մերժում էր ազգայնութիւնը։

Այդ եռուն արհեստանոցի մէջ, ուր կերպարանւում էին զարթ ու աղմկասէր երիտասարդութեան մտքերն ու զգացումները՝ զատւեց ուսանողների մի փոքրիկ խումբ։ Նրանք լուռ էին և մտածկոտ։ Նրանց աչքերը յառած էին դէպի հեռու հայրենիքը։ Նրանց սիրտը բաբախում ու ցաւում էր հարազատ ժողովրդի համար, նրանց ուղեղը յար և միշտ միջոցներ էր հնարում՝ ազատելու այդ ժողովուրդը թիւրք բարբարոս բռնակալութիւնից։

Մօտեցան նրանք երիտասարդ կոսմոպոլիտին, արթնացրին նրա մէջ հայկական ոգին և փառեցին նրա սրտում աստուածային կայծը։

Այդ կայծը բոցավառւելով, հրդեհեց նրա ամբողջ էութիւնը, սարսեցց ձգել ամեն բան, ընտանիք, կարիէր, երջանկութիւն, արծարծեց նրա մէջ սէր միայն — սէր դէպի մարդը ընդհանրապէս և սէր դէպի հարազատ ցեղը, իբրև ամենադժբախտ բեկորը բազմաչարչար մարդկութեան։

Մի անսահման, ջինջ, գրեթէ մայրական սէր դէպի հայ ժողովուրդը... Ահա մի տիրական զգացում, որ լցնում էր այդ սքանչելի երիտասարդների ողջ էութիւնը, հեռու պահելով նրանց այլանդակ նախապաշարումներից և դնելով առողջ ու ամուր խարիսխները հայկական վերածնութեան, առողջ ու անսասան հիմքերը՝ որոնց վրայ պիտի բարձրանար յետագայում Հ. Յ. Դաշնակցութեան փառաւոր շէնքը։

Եւ այդ համեստ, հեզ, ամօթխած երիտասարդները իրենց յամառ, սիստեմատիկ աշխատանքով դուրս բերին հայ ցեղը ստրկութեան անդունդներից և պատւաւոր տեղ տուին նրան առաջաւոր Ասիայի ժողովուրդների շարքում։

***

Գարնանային պայծառ Արևը ողողում էր սար ու ձորեր, տաք, կենսարար ճառագայթներով։ Բնութիւնը վերարթնանում էր. ծաղիկները տարածում էին ամենուրեք իրենց անոյշ բուրմունքը, ամեն ինչ կեանք էր շնչում և սէր ու բերկրութիւն։

Նրանք իրար հանդիպեցին։ Երիտասարդը դեռ նոր էր ոտք դրել ուրոյն կեանքի ճամբու վրայ, բայց արդէն իսկ ծանօթ էր հասարակութեան իր տաք, խանդավառ, գաղափարական պատկերով։ Երիտասարդութիւնը ունկնդրում էր նրան, բոցավառւում նրա ջերմ խօսքով և բազմաթիւ կանացի սրտեր տրոփում էին նրա կրակոտ ու բարեսիրտ նայուածքի հանդէպ։ Բայց նա չէր նկատում այդ. նրա աչքերը շատ հեռուն էին նայում։

Ահա սակայն ցցւեց առջևը՝ նրա անունով ու պատ-

բեռվկ հրապուրած մանկատիպ „հերոսուհին“, եկաւ խռովելու նրա իդեալիստ, գաղափարական պաշտամունքներով տարուած սիրտը... „Ես Ձեզ սիրում եմ“— ասաց ուղղակի երիտասարդ բարոյչին։ Ինակնկալ և համարձակ այդ յայտարարութիւնը ցնցեց վերջինին, խոնարհեցրեց և արորեց նրա ուժեղ կամքը։ Առիւծը դարձաւ գառնուկ։ Սիրոյ զգացումը բռնկեց նրա սրտի մէջ, աւելի ևս շնչաւորեց ու վառեց նրան, աւելի ևս զարկ տուեց գաղափարական նրա թռիչքներին։ Կեանքը այնուհետև մի սքանչելի մեղեդի էր նրա համար, գործում էր նա երգելով, աշխարհը թւում էր այնքա՛ն չքնաղ, լի յոյսերով ու երազներով։

Ժամանակը առաջ սահեց...

„Ես Ձեզ այլ ևս չեմ սիրում“—ասաց մի անգամ երիտասարդին իր սիրած ու գուրգուրած էակը, նոյնքան համարձակ ու կտրուկ, որքան առաջին անգամ, երբ իր սէրն էր խոստովանում... Ո՞վ կարող է բացատրել երիտասարդ սրտի քմահաճոյքները...

Նորէն ցնցուեց գաղափարի մարդը, աշխարհը վերստին խաւարեց նրա առջև, խորունկ աչքերը վայրկենաբար փայլատակեցին մոայլ չարութեամբ, ապա կրկին մարեցին։ Պաղ, սրատաճաք գիշերը համակեց նրա ամբողջ էութիւնը, կեանքն իսպառ կորցրեց նրա աչքում իր համն ու արժէքը, նա այլ ևս խորտակուած գոյութիւն էր, մի աւերակ...

Շուտով, սակայն, սթափուեց։ Սահմանի միւս կողմից տանջուող ժողովրդի հեծեծանքները միշտ աւելի աղեկտուր ու սրտաճմլիկ՝ հասնում էին նրա ականջին։ Հնարաւո՞ր էր միթէ չտալ արձագանք։ Այդ ժողովրդի բարօրութեան համար չէ՞ր, որ նա որոշել էր զոհաբերել իր կարիերն ու կեանքը...

Եւ սիրոյ նահատակը վերստին շտկեց իրանը, խոր թաղեց իր վէրքը, յաղթահարեց ու վերադարձաւ նորէն—կեանքին։

Բայց այդ կեանքը այնուհետև այլ ևս չտեսաւ ուրախութիւն։ Նա եղաւ ծայրէ-ծայր մի անհատնում տառապանք, մի անդուլ անձնազոհութիւն ու նահատակութիւն...

* * *

Երիտասարդ դաշնակցականները ցրուեցին, մտան ժողովրդի մէջ։ Եւ սկսուեց եռուն աշխատանքը։ Ուժեղ ու յանդուգն սլացք տուին իրենց հոգեկան ուժերին, գնացին խորտակելու հարազատ ժողովրդին կաշկանդող շղթաները։ Եւ մարդկային ծովը ալեկոծուեց։ Դուրս լողացին նրա յատակից հարիւրաւոր ու հազարաւոր կարիճներ, երիտասարդ, սրտոտ, խանդավառ։ Վսեմ ու եզակի մի երևոյթ էր։ Ի՜նչ ահռելի չարչարանքներ, ո՞րպիսի անլուր, գերմարդկային աշխատանք ու տառապանք։ Ընկնում էին հարիւրներով այդ շքեղ հերոսները, սուլթանական անողորմ մանգաղը հնձում էր ու հնձում անդադար, հայ մայրերը լալիս էին յուսահատ՝ իրենց սիրած զաւակների վրայ, բայց նրանք անայլայլ առաջ էին նետւում տատասկոտ ու արիւնոտ ճանապարհով, գնում էին զոհւելու... „Ազատութի՞ւն կամ մա՞հ“—այդ կոչը որոտընդոստ արձագանքներով տարածւում էր հայկական լեռների մէջ։ Ցարերային մի յորձանք էր, անդիմադրելի մի ժղում՝ դէպի ահաւոր արկածներ, նահատակութիւն և մահ... Թափուած արիւնը ծնունդ էր տալիս նոր ու նոր անձնազոհ կարիճների, հերոսների։

Մարած հրաբուխը վերարթնանում էր։ Եւ փոքրաթիւ պարագլուխները, որ հոգին էին այդ չքնաղ վերածնութեան, քաջալերւում էին ու միշտ աւելի սաստկացնում իրենց թափը։ Ստւերի մէջ էին մնում նրանք, բայց յայտնի էին ամենքին, նրանց անունով երգւում էր գաղափարական ու մարտնչող երիտասարդութիւնը։ Համեստութիւն և ազնուութիւն՝ դարձել էին նրանց մէջ պաշտամունք։ Ապրում էին նրանք նիւթական կարօտութեան մէջ, թէպէտ և նրանց առջև բաց էին հարստութեան ճամբաները։ Միշտ զինուորական իրենց դիրքերում, միշտ պարաքի դաշտի վրայ, յաճախ լքուած իրենց հայրենակիցներից ու բարեկամներից՝ նրանք անվհատ դիմում էին դէպի Նպատակը։

Մէկը առանձնապէս աչքի էր ընկնում այդ փոքրաթիւ առաջնորդների մէջ իր անհաշտ թշնամութեամբ դէպի կեղծը, Անազնիւը, Անմաքուրը։ Բարակ, նիհար, խորունկ ու խոշոր աչքերով, փոքր ինչ կոշտ շարժուածքներով ու ժեստերով և միշտ բարձրատոն, տաք ու տաքացնող ճառերով՝ նա յիշեցնում էր անապատից եկած ճգնաւորի, հինաւուրց մարգարէի, որ գնում էր դէպի մարդիկ՝ խարազանելու նրանց բարոյական արատները և ամեն տեսակ ապօրինութիւն ու անարդարութիւն։

* * *

Օսմանեան սահմանադրութեան առաջին շրջանում էր, մարդիկ դեռ հաւատում էին նրա ամրութեան ու ճշմարտութեան։

Նա եկաւ Մուշ։ Գրեթէ յաղթական մի ընթացք էր։ Բայց ոչ այն աղմկալի դիմաւորումներից՝ որ սնափառ հասարակութիւնը սովորաբար սարքում է իր սնափառ հերոսների համար։ Դա մի համեստ, բայց անկեղծ ոգևորութիւն էր, որ սարքում էր պարզ, աշխատաւոր ժողովուրդը։ Մուշից և շրջակայ գիւղերից երիտասարդութիւնը շտապում էր տեսնել Նրան, սեղմել, համբուրել նրա ձեռքը։ Չէ՞ որ նա նրանց համար ղեկավար էր այն երկարատև ու արիւնոտ կռւի մէջ, որ նոր էր վերջացել։ Նա հեռաւոր ու խորհրդաւոր հիւրն էր, որի մասին շատ էին լսել, բայց դեռ երբէք չէին տեսել։

Խումբ-խումբ գալիս էին նրա մօտ և կռւող ընկերները, նրանք, որոնք մի ժամանակ դողացրել էին Սասնոյ լեռների մէջ անգամ համիդեան զինուորներին, իսկ այժմ

հանել էին իրենց առուծի մորթիները և համեստօրէն լծուել գիւղական աշխատանքի մէջ։ Նրանք արդէն ճանաչում էին նորեկին, ճանաչում էին նամակներով, գաղանի, ծածկագիր կամ այլաբանօրէն գրուած նամակներով, որ ընկել էին իրենց ձեռքը հեռաւոր վայրերից, հազար ու մի փորձութիւնների միջից անցնելով։ Բայց նրանք էլ դեռ չէին տեսել իրենց մտաւոր առաջնորդին և ահա գալիս էին դիմաւորելու, ուրախ, անհամբեր, իրենց գեղջկական ցնցոտիներով։ Ցեսնում էի արցունքներ նրանց դաժան աչքերի մէջ...

Նա հաստատուեց Մուշի մէջ։ Նա այժմ արդէն զուտ կրթական ծրագիրներ ունէր. կուզէր բարձրացնել հայ ժողովրդի մտաւոր ու հոգեկան զարգացման մակերևոյթը։

Վարձեց մի անշուք տնակ, երկու փոքրիկ սենեակներից, որոնց յատակը հող էր և ունէին մի մի փոքրիկ լուսամուտ, զանազան ճեղքուածներով։ Դահապետական մի վառարան, որ չէր տաքացնում սենեակները։ Կոշտ ու կոպիտ փայտէ կարասիներ, որ իր պատուէրով շինել էին մշեցի վարպետները։

Ձմեռը ցուրտ էր սենեակներում։ Ջուրը սառչում էր գիշերը։ Բայց նա չէր բնաւ տրտնջում։ Նա տաքացնում էր իրեն այցելու բազմութիւնը իր ջերմ, սիրալիր խօսքերով և լայն հիւրասիրութեամբ։ Հարուստները, ազդեցիկները չէին գնում նրա մօտ, այլ միայն խեղճ ու կորած մարդիկ, որոնց արտաքինը կեղտոտ էր, բայց հոգին պարզ ու մաքուր։ Բոլորի համար նա խորհրդատու էր և իր չնչին վաստակի մեծագոյն մասը բաժանում էր չքաւորներին։

Բայց ահա ամպերը սկսեցին խտանալ իր շուրջը։ Մութ, կասկածելի մարդիկ, վաշխառուներ, որոնք յեղափոխական շարժման ընթացքում, օգտուելով կուսակցութեան անունից, ծծել էին ժողովրդի կենսական հիւթերը, յետագայում բռնաւորներ ու կուսակցական զենքը թագցնողներ, ամեն տեսակ կեղեքիչներ ու հարստահարիչներ, լրտես ու դաւաճաններ, վերջապէս խաբեբայ ու տգրուկ վանականներ — բոլորը յուզուեցին, իրարու անցան։ Նորեկը հանգիստ չէր տալիս նրանց։ Անողոք ամեն տեսակ լրբութեան ու աղտոտութեան հանդէպ՝ նա հրապարակով խարանում էր նրանց հեղինակներին, պահանջում էր բացատրութիւն նողկալի արարքների համար, պահանջում էր հաշիւ ծախսուած դրամների, պահանջում էր արտաքսել նրանց բոլոր ասպարէզներից, ուր կարող էին վնասակար լինել իրենց անարգ, հակաժողովրդական գործունէութեամբ։

Շատ բան աջողում էր նա։ Թւում էր թէ արդէն մօտ էր յաղթութեան ժամը։ Բոլոր զրկուածները, որբ ու այրիները հաւատում ու վստահում էին նրան և սպասում էին նրանից իրենց վիճակի թեթևացում։

Սակայն մութ ուժերն ևս չէին ննջում։ Նրանք ալէկոծուեցին ու համախմբուեցան։ Նրանք ի գործ դրին ամեն միջոց խարազանող մարգարէի դէմ — դաւ, գրգռում, սուտ ու անարգ զրպարտութիւն։ Նրանք հիւսեցին մի ահագին սարդոստայն, ցանցով պատեցին նրա գործունէութեան ամբողջ դաշտը, ձգտեցին պատնէշ դնել նրա ամեն մի ձեռնարկի առաջ և ճարպիկ, հմուտ դաւերով խափանեցին նրա բոլոր հանրօգուտ փորձերը։ Իրենց աղտոտ թաթերով քրքրեցին անգամ նրա մասնաւոր կեանքը։ Եւ այդպիսով նրանք անհնարին, անհանդուրժելի դարձրին նրա աշխատանքը Մուշի մէջ։

Եւ նա ի վերջոյ տեղի տուեց։ Սև ուժերի բանակը խորտակեց նրան։ Թողեց նա Մուշը, լի դ ռնութեամբ, ծանր խոհերով, թողեց մտածելով, որ ժողովուրդը աւելի դժուարութեամբ կ'ազատագրուի իր համարիւն կեղեքիչներից, քան թէ արտաքին թշնամուց։

Ժողովրդի թշնամիները յաղթանակեցին, կացութեան տէրերն էին նրանք։ Բայց անխոնջ աշխատաւորի ձգած սերմը անպտուղ չ'անցաւ։ Նա տուեց իր բողբոջները։ Ժողովուրդը սթափուեց։ Նա հասկացաւ, թէ ո՞վ էր և ինչ էր այն մարդը, որին նա կորցրեց։ Եւ խուլ դժգոհութիւնը ծայր է տալիս արդէն հարստահարուած հայ աշխատաւորութեան մէջ, ընդդէմ իր ցեղակից թշնամիների։ Դժգոհութիւնը շուտով կը վերածուի ըմբոստացման ու պայքարի։

Խիստ դժուարին է այդ պայքարը, բայց նրա ալիքը աճում է հետզհետէ և լիայոյս ենք, որ մաքրութեան ու շիտակութեան առաքելի նետած գաղափարը կը ձգէ խոր արմատներ և ժամանակով կը յաղթի։

***

Նա նորէն Պոլիս է։ այդ թշուառ ու եղկելի աղբանոցում։

Կուշտ, պահպանողական „ազգայիններ“ հոգաբարձութիւնը մեծ դժկամակութեամբ տեղ տուեց նրան դպրոցի մէջ։ Չէ՞ որ նա յեղափոխական էր, դաշնակցական էր։ Կարելի՞ է միթէ այդպիսի մարդուն տեղ տալ ազգային դպրոցներում։

Նշանակում են մուրացկանի ռոճիկ։ Ապրում է նա այդ գրօշներով, փնտրում է բնականաբար ածան ու վատ ճաշարաններ, իսկ հագուստը՝ միշտ հնամաշ ու պատռուած։

Նա մնում էր սակայն նոյն անվկանդ գործիչը, անսասան իր շիտակութեան ու վեհանձնութեան մէջ և շարունակում էր ղեկավարել մտքերը։ Ցաք վիճաբանութիւններ, լուսաւոր, բարձրաթռիչ երազներ — ահա այն մթնոլորտը, որ նա մտցրեց իր դասարանի մէջ և որով սնուում, ապրում էր։ Անմիջական մասնակցութիւն ունէր հայկական կեանքի բոլոր առաջադիմական երևոյթների մէջ, առանց Նրան գրեթէ ոչինչ չէր յաղթուում։

***

Անհանգիստ, եռուն բնութիւնը թոյլ չէր տալիս նրան հանգստանալ։ Աշխատում էր նա մինչև ուժաս-

պառում, յոգնում էր, այնքան յաճախ՝ որ օրայ մէջ մի քանի անգամ պառկում էր ուժերը վերականգնելու համար։ Յաճախ էր հիւանդանում, բայց գլուխը շարունակում էր աշխատել — միշտ պայծառ ու լուսաւոր։ Լի ինքնատիպ գաղափարներով ու յղացումներով, միշտ գեղեցիկ և ճշմարիտ։

Դարձ էր, որ մարմինը մաշւում էր, ֆիզիկական ուժերը սպառւում էին։ Սակայն նա ինքը չէր խոստովանում այդ և շարունակ ձգում էր արդէն խիստ ձգած լարը։ Եւ նա ահա կարեւեց... Կտրեւեց յանկարծ, շանթահարելով բոլորովին, կարեւեց այն ժամին, երբ նա այնքան պէտք էր իր ժողովրդին, որի ճակատագիրը վճռւում էր, որին բախտը ժպտում էր, գուցէ առաջին անգամը հարիւրաւոր տարիների սոսկալի նահատակութիւնից յետոյ։

Պոկւեց այդ կեանքը անողորմ ձեռքով, ինչպէս պոկւում են ծաղիկները, որոնց նա այնքան սիրում էր իր քնքոյշ, կանացի սրտով։

Բայց — թառամածը չես կենդանացնի, գնացողը էլ չի վերադառնայ։ Մնում է մի բաց, որ կը լցւի ժամանակով և վէրքը կը կազդուրւի։

Իսկ դու, հա՛յ ժողովուրդ, պիտի յիշե՞ս արդեօք այդ մարդուն, որի ամբողջ կեանքը մի մարմնացած սէր էր դէպի քեզ, ջերմ, քնքոյշ սէր, որ չգիտէր ոչ մի սփոփանք։ Նա աւելի ջինջ էր, աւելի անուշահամ, քան պատանիի սէրը դէպի կոյսը։ Նա աւելի լեցուն ու անյատակ էր, քան մօր սէրը դէպի իր մանկիկը։

Այդ կեանքը ծայրէծայր մարտիրոսութիւն էր — յանուն քո երջանկութեան, հա՛յ ժողովուրդ։ Քեզ համար նա մոռացել էր ամեն բան այս աշխարհում, մոռացել էր նոյնիսկ ինքն իրեն։ Դու, քո ապագան նրա կեանքիլ միակ նպատակն էիք և նրա միակ ուրախութիւնը։ Լալիս էր նա և երազում քո բզկտած, կիսակենդան մարմնի վրայ։ Երազում էր և ձգտում կռել քեզ համար աւելի երջանիկ ապագայ։

Պիտի յիշե՞ս նրան, հա՛յ ժողովուրդ, — չգիտեմ Մարդկութիւնը այնքա՞ն մոռացկոտ է։ Բայց նրա համար — միևնոյն է։ Նա չէր տանում պերճանք ու երախտագիտութեան ցոյցեր՝ իր կեանքի ընթացքում։ Դրանք բնաւ պէտք չեն նրան — և այժմ, մահից յետոյ։

Բացւած գերեզմանը կը լցւի։ Կը մարէ շրջապատի ժխորը, կը լռեն թաղման որոտուն ճառերը, որոնց համար այնքան շռայլ են մարդիկ։ Կը սրբւին վերջին արցունքները և բոլորը կերթան գերեզմանոցից։ Կը մնայ նա մենամենակ — նրա ցուրտ մարմինը — գերեզմանային հանդիսաւոր լռութեան մէջ։

Մենամենա՞կ... Մայրաբնութիւնը կը գրկէ նրան, կընդունէ իր հզօր կուրծքի վրայ այդ յոգնած, պաշտելի գլուխը։ Կը սփռէ նրա շուրջը իր այլազան գեղեցկութիւնները։ Կեանքը՝ զարթ ու փարթամ՝ կը ծաւալւի նուիրական գաւթարանի մօտ, Արեւը կը ճառագայթէ կենդանարար իր լոյսը, ծաղիկները կը փուին ու կը գուրգուրան իրենց թանկագին սիրեցեալին... Եւ սիրոյ, ջերմութեան ու լոյսի այդ գերագոյն ներդաշնակութեան մէջ՝ կը հանգչի նրա ոգին, որ նոյնքան ջերմ, պայծառ, լուսատու է և նոյնքան յաւերժական։

Սիրոյ սերմը կեանք տւեց նրան։ Եւ նրա կեանքը լուսաւոր ամպի նման սփռւեց ահագին տարածութիւնների վրայ, ցանելով ամենուրեք սերմեր մարդասիրութեան ու այլասիրութեան։ Այն գոհարները, որոնցով բնութիւնը առատօրէն օժտել էր նրան — բոլորն էլ նա վերադարձրեց իր ժողովրդին։ Ինքը մնաց առանց ոչնչի։ Հոգին, իր վերջին գոյը, աւանդեց նա Տիեզերքին։

Այնտեղ, Բնութեան ծոցում, չկայ այլ ևս լաց, արցունք, տատմների կրճատոց։ Այնտեղ վերջապէս կը հանգըստանաս դու, սիրելի ընկեր...

***

Քե՛զ եմ դիմում, սքանչելի՛ մանկիկ, որ աշնան ծնունդն ես քո անբախտ հայրիկի և միակ գոհարիկը նրա շռայլուած գանձերից։ Աճի՛ր, իմ սիրելի Վիգեն. եղիր մաքուր աղաւնեակ և սրաթռիչ արծուիկ... ու գնա՛ նոյն ճամբով։ Դուն էլ դի՛ր գլուխդ հարազատ ժողովրդի համար և եղիր արժանի Հայրիկիդ։

ԴՕՔՏ. ՋԱՎ.

ՕՐՀԱՍԻ ԹԵՍՏԵՐ

Բութ, յաւիտենօրէն կոյր օսմանեան մակեաւելիզմը իր վերջին փամփուշտներն է արձակում հայկական խնդրի մէջ։ Նա փորձեց չճանաչել այդ խնդրի գոյութիւնը։ „Հայաստան“ չկայ, կայ „Քիւրդիստան“, կան „թեթև դժգոհութիւններ ու խլրտումներ“ հայերի ու քրդերի միջև հողային խնդրում, որ շուտով, շա՛տ շուտով պիտի դադարին, քանի որ Դուռը որոշած է մացնել անմիջապէս բարենորոգումներ, և այն՝ ոչ միայն „Քիւրդիստանում“, այլ ամբողջ Ասիական Թիւրքիոյ մէջ...

Այսպիսի յայտարարութիւններով էին պատասխանում թալատները՝ թէ հայերին և թէ Եւրոպային։ Ոչ ոք չհաւատաց, ոչ իսկ Եւրոպան, որ տանեակ տարիների ընթացքում հաւատացող էր ձեւացել Դրան բոլոր խաբեայ յայտարարութիւններին։

Կացութիւնը էլ նախկինը չէ։ Միջերկրական շահերը խճողւում, հիւսւում են հայոց հարցի հողի վրայ, ոչ մէկը չի ցանկանում վառել մի նոր հրդեհ Արևելքում, հայկական լեռնադաշտի վրայ, որ կարող է տարածւել մինչև Պարիզ ու Լոնդոն։

Հայ շարժման ուրուականն է, որ մտածել է տալիս անգամ Բիսմարկի յաջորդներին... Նոր շարժում Հա-

յաստանի մէջ՝ կը նշանակէ ռուսական նոր միջամտութիւն, Ասիական Թիւրքիոյ անդամահատում և բոլոր միւս պետութիւնների մի՞խսլ արշաւանք դէպի վիթխարի դիակը... ընդհարումներ ու արիւնհեղութիւն։

Զգաստանում է անդամ Հանօտօների և Պիշոնների Ֆրանսիան։ Ահա, վերջապէս մի նախարարապետ և մի արտաքին գործերի մինիստր, որ հանդիսաւորապէս յանձնառու է լինում պաշտպանել հայկական դատը Թիւրք ոֆիցիոզ քաղաքագէտների դէմ։ „Թիւրք կառավարութիւնը—ասաց նորերս մինիստր.նախագահ Դուսերգ—համոզուած լինելով թէ կը խուսափէ պետութիւնների ճնշումից, կանխելով նրանց առաջարկները, ինքը շտապեց նշանակել երկու օսմանցի ընդհանուր վերատեսուչներ՝ հայոց վեց վիլայէթների համար։ Սակայն Ռուսաստանը, Ֆրանսիայի և Անգլիայի աջակցութեամբ, և միւս պետութիւնների համաձայնութեամբ շարունակում է սկսուած դիմումները, որպէս զի տրւի Հայաստանին մի ռէժիմ, որը պիտի ապահովէ մարդկանց կեանքն ու գոյքը։ Հաւատարիմ մարդկայնութեան սկզբունքներին... ես պէտք է երկրորդեմ մեր դաշնակցի ճիգերը, որպէս զի հաստատուին հայկական նահանգներում կարգն ու խաղաղութիւնը“...

Այսպէս էր խօսում այն երկրի նախարարապետը որից Թիւրքիան ակնկալում է դրամական խոշոր աջակցութիւն՝ իր աւերածները շտկելու համար։

Պոլսի մէջ ևս սկսեցին զգաստանալ։ Եւրոպան ըստ երևոյթին կատակ չի անում այլ ևս։ Մնում էր մէկ ելք անախորժ կացութիւնից։ Դրան կարճամիտ դիպլոմատները անպատճառ փրկել էին ուզում օսմանեան „պրեստիժը“, սուլթանական գերիշխանութիւնը, որ խախտւում էր Հայաստանի մէջ, եւրոպական կօնտրոլի հաստատումով... մի պրեստիժ, որ հազար անգամ և հազարաւոր ձևերով խախտել է արդէն և որից խղճուկ թափթփուկներ են միայն մնացել։

Մնում էր մէկ ելք—համոզել հայերին, նախ քաղցրութեամբ, ապա և սպառնալիքով, որ հրաժարւին եւրոպական կօնտրոլից և վստահին Թիւրքիոյ խօսքին ու տուելիք բարենորոգումներին։ Եւ ահա երկար բանակցութիւններ.—նախ, ի հարկէ, „Դաշնակցութեան“ հետ։ Հայ Յեղափոխական կազմակերպութիւնը չէ, որ կ'երթայ փնտրելու Թալաաթներն ու Ջավիդները և սակարգելու նրանց հետ, ինչպէս որ բարձրաձայն կը յայտարարին Մօսկուայի ու Թիֆլիսի սիկօֆանները, զանազան Ջիվիլիգօվներ ու համհարզներ։ Թիւրք մինիսարներն են, որ կը փնտրեն „Դաշնակցութիւնը“, ձգտելով—ունա՛յն աշխատանք—գէթ փոքր ինչ վստահութիւն ներշնչել նրան և նրա միջոցով հայ ժողովրդին։

Եւ երբ „Դաշնակցութիւնը“ վճռականորէն չեշտեց եւրոպական կօնտրոլի անպայման անհրաժեշտութեան վրայ, երբ ազգային իշխանութիւններն ևս, կաթողիկոսական պատգամաւորութեան առաջնորդի հետ յայտարարեցին, որ երբէք չեն կարող զոհել կօնտրոլի սկզբունքը, այն ժամանակ Թիւրքական մոլեռանդութիւնը սկսեց թոյն ժայթքել և մինիստրների բերնով իսկ սպառնաց... նոր ջարդ սարքելը։

Օրհասի ժեստեր են։

Ցաւենայն դէպս այդ կոպիտ սպառնալիքը թող մի աւելորդ խթան լինի մեզ համար, որ պատրաստւինք ամենատեսակ պատահականութեանց դէմ, առաջ տանենք ինքնապաշտպանութեան մեր գործը, ո՞յժ կազմենք մեր նզովեալ միջավայրում։ Որքան աւելի ուժեղ լինենք, այնքան աւելի զգուշութեամբ կը վարւին մեզ հետ մեր ապիկար հրամանատարները, այնքան աւելի կորովով կը շարժւին և պետութիւնները հայկական խնդրի մէջ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Խորապէս ներշնչուած այն մեծ պարտականութենէն, որ հայ ժողովուրդի կացութիւնը կը դնէ քաղաքական կուսակցութիւններու վրայ, և համոզուած՝ թէ որքան կարևորութիւն ունի քաղաքական բոլոր ուժերու ներդաշնակ գործակցութիւնը պետական և հանրային կեանքի ներկայ օրերուն, Հայ Կուսակցութիւններու ձեռնհաս Մարմինները.—

Հ. Յ. Դաշնակցութեան Արևմտեան Բիւրօն,
Ս. Դ. Հնչակ. Կուսակց. Տաճկ. Կեդր. Վարիչ Մարմինը,
Սահմանադիր Ռամկավարներու Կեդրոն. Ակումբը, և
Վերակազմեալ Հնչակեան Կեդրոնի վարչութիւնը

շարք մը խորհրդակցական ժողովներէ ետք, որոշեցին՝

Ա) Միասնաբար և ձեռք ձեռքի ուած գործել Հայկական Բարենորոգումներու իրականացման համար։

Բ) Համաձայնութեամբ շարժիլ Ազգային ներկայացուցչական Մարմիններու մէջ։

Գ) Համերաշխօրէն ընթանալ Օսմ. Երեսփոխանական ընտրութեանց և Պարլամենտական խնդիրներու մէջ։

Հարցեր, որոնք կենսական են ու այժմէական, և կը պահանջեն քաղաքական ուժերու խելացի համադրութիւն։

Միջկուսակցական այս համերաշխութեան կէտ նպատակն է՝ բոլոր ոյժերը ի սպաս դնել Հայկական Բարեկարգումներուն, որոնց իրականացումը գերազանցապէս անհրաժեշտ է թէ՝ ժողովուրդի և թէ՝ պետութեան շահերու տեսակէտէն, ջանք ու աշխատանք չխնայել մէջտեղէն վերցնելու բոլոր սին ու վնասակար վէճերն ու ընդհարումները, որոնք տարիներ տարիներ պատճառան և հետևաբար ոյժերու ամուլ վատնումի պատճառ են եղած. անկեղծօրէն ձգտիլ համերաշխական այս շարժման կապելու հայ հասարակութեան անկուսակցական

շրջանները, որպէս զի բոլոր կենսունակ և շինարար ոյժերը, բոլոր հոսանքները կարող ըլլան ծառայելու գլխաւոր նպատակին, — Երկրին և հայ ժողովուրդին՝ անոր սահմանադրական և ազգային իրաւունքներու ամրապնդման համար։

Համերաշխական ներկայ շարժումը — պէտք է շեշտել — չի սահմանափակուիր կուսակցական շրջանակով։ Ան կը ձգտի այս աշխատանքին կապել չէզոք հասարակութեան զանազան խաւերը, իր այլ և այլ հիմնարկութիւններով. ուստի կը սիրենք յուսալ, թէ այս ճամբուն վրայ պիտի չհանդիպինք արգելքի կամ չկամութեան, քանի որ այս շարժումն ու իր նպատակը կուսակցական չեն, այլ համաժողովրդական, նոյնքան սիրելի չէզոք հասարակութեան, որքան և կուսակցական շարքերուն համար։

Միջկուսակցական Ժողովը որոշած է Ներքին Կանոնագրով մը մանրամասնել ներկայ համաձայնութեան նպատակը, կուսակցական փոխադարձ յարաբերութիւններու սահմանները, միջկուսակցական Միջնորդ Ատեաններու դերը, որպէս զի կարելի ըլլայ պառակտումներու և թիւրիմացութիւններու առաջքն առնել և ներդաշնակութիւն մտցնել կուսակցական յարաբերութեանց մէջ։ Այդ մանրամասնութիւնները կը հաղորդուին տեղական Մարմիններուն, կուսակցական ճամբով, որպէս զի ամէն տեղ՝ կազմակերպական շարքերը ընթանան այն շաւղով, որ կը համապատասխանէ համերաշխութեան ոգւոյն և նպատակին։

Համամտութեան և բերկրանքի այն բուռն արտայայտութիւնները, որոնցմով հասարակութիւնը ամիսներ առաջ ողջունեց համերաշխութեան մանակի ձեռնարկները Երկրի ներսը և Գաղութներու մէջ, իրաւունք կուտան մեզ հաւատալու, թէ՝ քաղաքական Հայ Կուսակցութեանց ղեկավար Մարմիններու ներկայ յայտարարագիրը, — նոր ու զօրեղ ն իրագործում մը համերաշխական շարժման — պիտի գտնէ ջերմ, անկեղծ և գործնական ընդունելութիւն թէ՝ կուսակցական և թէ արտակուսակցական խաւերու մէջ։ Այլ ևս ոչ մէկ երկդիմութիւն, ոչ ալ քայքայիչ յոռետեսութիւն ընդհակառակը։ Այս շարժումը, որուն իրագործման վաղուց փափաքող է հայ ժողովուրդը, պէտք է իր արդէն փշոտ ճամբուն վրայ գտնէ բոլորին կողմէ—կուսակցական թէ չէզոք, մտաւորական թէ աշխատաւոր, վաճառական թէ արհեստաւոր—անկեղծ համակրանք, խորունկ յարգանք ու գործնական աջակցութիւն։

Ու այդ հաւատքով՝

Կ՚ողջունենք համագործակցութեան շարժումը, որ այս օրինակ համաձայնութեամբ շաղկապելով քաղաքական Հայ Կուսակցութիւններու ղեկավար Մարմինները, կը խոստանայ տարածել զայն ընդհանուրի վրայ։

Կ՚ողջունենք մանաւանդ Երկրի բազմացաւ ժողովուրդը, որ ակնդէտ կը սպասէ իր գործօն ոյժերու ներդաշնակ աշխատանքին և որուն հանդէպ՝ ներկայ համերաշխութիւնը քաղաքական յարգանքի նոր ապացոյց մըն է, քաջալերիչ ու խոստմնալից։

Յարգա՜նք Միջկուսակցական համագործակցութեան։

Յարգա՜նք հայ ժողովուրդին, որուն պիտի ծառայեն բոլոր կուսակցութիւնները։

Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Գիւղ
Ս. Դ. Հնչ. Կուս. Տաճկ. Գեղ. Վարիչ Մարմին
Սահմանադիր Ժամկոմար. Գեղ. Գլխաւոր
Վերակազմեալ Հնչակ. Գեղրոնի Վարչութիւն։

1913 նոյեմբեր
Կ. Պոլիս։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՅԱՐԱՏԵՒՈՂ ՏԱԳՆԱՊԸ

Բեզենցի գալուստը.—Մէջլիսի ընտրութիւններ.—Շանցաժիսցիերի խումբ։

Թեհրան, Հոկտեմբեր

Երկար ու անհամբեր սպասեցնելուց յետոյ՝ վերջապէս բարեհաճեց երկիր մտնել խնամակալը, Նայիբ Սալթանէ։ Հետաքրքրութիւնից զուրկ չեն նրա քաղաք գալու մանրամասնութիւնները, որ ինքնին շատ բան կարող են պարզել ձեզ։ Գիտէի արդէն, որ խնամակալը գնացել էր արտասահման՝ եւրոպական պետութիւնների տրամադրութիւններն իմանալու և դրամ հայցելու այս երկրի համար։ Երկար ժամանակ այստեղից անընդհատ տեղում էին հեռագիրներ՝ խնդրելով նրան վերադառնալ երկիր, բայց ապարդիւն։ Ի վերջոյ, երկրիս խորհրդատու նախարարները վճռեցին մի մարդ ուղարկել նրան բերելու։ Արտաքին գործոց նախարարին էլ այլ միտիայով ուղարկեցին։ Սրան վերջապէս յաջողւում է համոզել, որ խնամակալը վերադառնայ։ Վերջինս ճանապարհւում է, իսկ մինիստրը մնում է Պետերբուրգում, երևի „պակասը լրացնելու“ համար։ Խնամակալին գալուց առաջ կարողանում են վախեցնել։ Ռաշտից մինչև Ղազվին 200 ժանդարմի ուղեկցութեամբ է գալիս, այնտեղից այս կողմն էլ մի ուրիշ 200-եակի։ Թեհրանից Ռաշտ ամբողջ ճանապարհների վարչութեան 4000 թուման էր վճարել, որ իր գալու 4 օրւայ ընթացքում ոչ մի ճանապարհորդի կառք չտան և ճանապարհի վրայ ոչ մի կառք չերևայ։ Քաղաքում այդ ժամանակ խիստ հսկողութիւն կար և արտակարգ պահակներ էին շրջում։ Խնամակալը կասկածում էր, որ իրեն ուզում են խփել, և դրա հետևանք պէտք է նկատել այդ բոլոր տարօրինակութիւնները։ Մայրաքաղաքից քիչ հեռու իջնում է գիշերելու։ Յայտարարւած էր, որ առաւօտեան նա քաղաք է գալու։ Սակայն մեր զգոյշ խնամակալը նոյն գիշեր մի կառքում մենակ ու մի ժանդարմի ուղեկցութեամբ քաղաք է մտնում։ Հետևեալ օրը միայն իմացւում է նրա գալը։

Խնամակալի գալուց շատ բաներ սպասողներ կան։ Կարծում են, թէ նա կարող կը լինի երկիրը հանել այս տարտամ ու լքված վիճակից, կարգի բերել գործերը և վերականգնել սահմանադրութիւնն ու մէջլիսը։ Մեր կարծիքով դրանք ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ հիասթափութեան ու յուսահատութեան վերջին ճիգեր ու յոյսեր։ Խնամակալը յայտնել է մինիստրական կազմին, թէ երկիրը շատ բարեփոխված է գտնում (?!), թէ կարգ ու կանոնը վերահաստատված է, թէ Պարսկաստանը անճանաչելի է դառել։ Այլն։ Նրա գալուց յետոյ, գիշերները լոյս էին տեսնում թռուցիկներ, որոնց մէջ պախարակում ու դատապարտում էին խնամակալին, աւելորդ էին համարում նրա վերադարձը և առհասարակ բաւական խիստ լեզու էին բանեցնում նրա դէմ։ Մարդը այժմ իր պաշտօնին է անցած։ Քծնող ժամուլը գովում, փառաբանում է նրան։ Ոչ միայն ձախ, այլ և պարզ ազատամիտ ու շիտակ մի թերթ չկայ հրապարակի վրայ, որտեղից կարելի լիներ հասարակութեան այդ մասի կարծիքներին ծանօթանալ։ Զգալի փոփոխութիւններ նրա գալուց յետոյ տեղի չի ունեցել, որ կարելի լիներ մատնանշել։

Մէջլիսի ընտրութիւնները նշանակված էին մօտ մի ամիսուկէս սրանից առաջ։ Ընտրական պայքարն ու հետաքրքրութիւնը այստեղ շատ աննշան է, գրեթէ բացակայում է։ Պայքարող կուսակցութիւններ ու խմբակցութիւններ չկան հրապարակի վրայ։ Պայքարում են, եթէ կարելի է այսպէս արտայայտել, թայֆաները, ֆէօդալական ու բիւրօկրատիկ կարգերի տիպար ներկայացուցիչները։ Թեկնածուների ցանկում պահպանողականների ու յետադիմականների անուններ են, որ փայլում են։ Ընտրութիւնների յայտարարումից քիչ յետոյ, Ատրպատականից, Խորասանից, Մազանդարանից հեռագիրներով դիմումներ են եղել կառավարութեան, պահանջելով չբացել Մէջլիսը մատնանշելով, որ նա վնասակար է երկրի համար։ Հեռագրները բոլորն էլ եկած են այն շրջաններից, ուր գտնւում են ռուսական զօրքերն ու իշխող նրանց ազդեցութիւնը։ Այս անակնկալը շփոթեցրել է կառավարութեան, որը մի ամսով յետաձգել է ընտրութիւնները։

Նոր ընտրողական օրէնքով, որ հայերին չի ճանաչում երկրի իսկական քաղաքացիներ, այլ մի կրօնական աղանդ, հայերն ու ասորիները պէտք է ունենային 2 պատգամաւոր։ Հայերը $1^1/_2$ և ասորիները $^1/_2$ (!)։ Ընտրութիւններ։ Եղանակը հայերի համար նախորոշած չէ ընտրողական օրէնքներով։ Այդ պատճառով դիմել է Թեհրանի համայնական վարչութեան ու խնդրել են տալ 2 ներկայացուցիչ միասին առաջ տանելու այդ հարցը։ Ներկայացուցիչները ընտրված ու գործի են անցած արդէն։

Մինիստրական կաբինետը իր վերջին օրերն է ապրում։ Արտաքին գործոց մինիստրը Պետերբուրգում է հանգստանում, միւսները հրաժարած կամ գրեթէ հրաժարած են։ Ծողովները չեն գումարւում. հարցերը բարձի թողի են արված։ Կազմի մէջ մնացեր են միայն երկու հոգի։ Ի նչ խօսք՝ որ նորը պիտի կազմւի։ Թէ ինչ է այդ նորը ներկայ պայմաններում, դժուար չէ գուշակել։ Ցամենայն դէպս՝ ոչ առաջադէմ և ոչ էլ անկեղծ հայրենասէր ու քաղաքագէտ...

Արազն էլ այս երկրի այն անհանգիստ շրջաններից մէկն է, ուր զանազան էլիաթներ ու խաներ տէր ու անօրէն են հանդիսանում և անընդհատ իրենց աւազակային ու գազանային բնազդները յագեցնելու միջոցներ ստեղծում։ Թալաններն ու աւազակութիւնները ոչ անսպասելի են եղել այնտեղ և, որ գլխաւորն է, ոչ էլ միջոցներ են ձեռք առնւել կառավարութեան կողմից՝ նրանց առաջն առնելու։ Թևաւորված դրանով՝ Արազի Լօռերը այս տարի էլ սկսել էին իրենց „գործը“ այդ շրջանում։ Նրանց դէմ էին գնացել ժանդարմներ և մի քարդ աւել լօռերին մօտ երեք շաբաթ սրանից առաջ։ Դրանից յետոյ լօռերը դեռ ոչինչ չեն արել։

Վերջերս քաղաքումս առաջ էր եկել շանտաժիստների մի խմբակ՝ կազմված մեծ մասամբ բանակում եղած ու մեր շարքերից վտարված զինուորներից։ Շանտաժի մի քանի դէպք տեղի ունենալուց յետոյ՝ ոստիկանութիւնը նրանց ձերբակալեց։ Ռուսահպատակներին յանձնեցին ռուսական կոնսուլատ, պահանջելով հէնց նոյն գիշեր պահակների հսկողութեամբ հեռացնել այստեղից և տանել Ռուսաստան, որ և կատարւեց անմիջապէս, իսկ պարսկահպատակներն ու տաճկահպատակները դեռ բանտումն են։ Տաճկական պահանջին՝ յանձնելու թիւրք հպատակին՝ պատասխանված է, որ այդ կ'արւի դատը կատարելուց յետոյ։

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նախկին խմբապետ Գիքօն Նորէն անյայտացել է Թէհրանից, ուր մի քանի ամիս էր ինչ վերադարձել էր կառավարութեան հետ համաձայնութեան գալուց յետոյ։

Այդ առթիւ կարևոր ենք համարում ասել հետևեալը։

Հ. Յ. Դ. Շահստանի Կ. Կոմիտէի 1912 դեկտեմբերի յայտնի թռուցիկից յետոյ, որով յայտարարում էր թէ այն անձնաւորութիւնները, որոնք կը շարունակեն մնալ կառավարութեան բանակում կը համարւին ոչ դաշնակցական, Գիքօն բանակը մտնելով և նրա խմբապետութիւնը ստանձնելով արդէն հեռացած համարւեց մեր կազմակերպութիւնից։

Նրա՝ կառավարութեան դէմ ըմբոստանալու ժամանակ և արկածի ընթացքում Կ. Կ-էն բոլորովին աւելորդ համարեց նրա ոչ դաշնակցական լինելը կրկնել։ Վասն զի որ իր վերոյիշած թռուցիկից յետոյ, այլ ևս նրան ոչ ոք դաշնակցական չէր ճանաչի։

Սակայն, ինչպէս վերջերում պարզուեց, անծանօթ շրջանները նրա դաշնակցական լինելու կամ չլինելու վերաբերմամբ թիւրիմացութեան մէջ էին ընկել և ոմանք հիմնուած „Դրօշակ"ի մէջ նրա անցեալ կռիւների մասին եղած թղթակցութիւնների վրայ, շարունակում էին ճանաչել իբրև դաշնակցական։

Նման թիւրիմացութիւններից ազատելու համար այն նոր շրջանները, ուր նա կարող է անցնել, պարտք ենք համարում կրկնելու, որ Գիքօն մեր շրջանի Դաշնակցութիւնից վաղուց ի վեր հեռացուած է։

Առաջարկւում ենք ինչպէս մեր շրջանի, նոյնպէս և այլ վայրերի Դաշնակց. մարմիններին ու ընկերներին, չճանաչել Գիքօյին իբրև դաշնակցական և նրա հետ կազմակերպական ոչ մի յարաբերութիւն չունենալ։

Հ. Յ. Դ. ՇԱՀՍՏԱՆԻ Կ. ԿՕՄԻՏԷ

Հոկտ. 1913 թ.

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՀԱՅ ԸՄԲՈՍՏԱՅՄԱՆ ՅՕԲԵԼԵԱՆԸ

(ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ)

Մօտ 30 տարի է անցել այն օրից, երբ Փորթուգալեան, տարագրուելով Վասպուրականից, ուր նուիրուել էր կրթական-դաստիարակչական գործունէութեան, եկաւ Մարսէյլ, հաստատուեց այնտեղ առաջին հայ յեղափոխական ազատ տպարանը և հրատարակեց հայ անդրանիկ յեղափոխական օրգանը „Արմենիա" անունով։

Դեկտեմբեր 25-ին Մարսէյլի հայ գաղութը, տեղւոյն ֆրանսիական մամուլի թղթակիցների ներկայութեամբ, շուքով կատարեց ծերունազարդ գործիչի յօբելեանը։

Գրական-երաժշտական այդ հանդէսը դարձաւ յեղափոխական մի գեղեցիկ տօնախմբութիւն։ Պարիզէն եկած էր յայտնի վարպետ-երաժշտուհի օր. Բաբայեան։ Եղան ճառեր ու ատենախօսութիւններ՝ յօբելեարի գործունէութիւնը դրուատող։ Խօսեցին պ. պ. Սահակեան, գաղութի կողմից, Ես. Մինասեան, Վ. Զարգարեան և Մ. Վարանդեան, վերջինը „Դրօշակ"ի խմբագրութեան կողմից։ Երգեցիկ խումբը, կազմուած տեղւոյն դաշնակցական արհեստաւոր և գործաւոր ընկերներից, երգեց մէջ ընդ մէջ հայրենասիրական և մարտական երգեր։

Բազմաթիւ շնորհաւորական հեռագիրները կարդացուց յետոյ, նախագահը խօսք տուեց „Դրօշակ"ի ներկայացուցչին։ Վերջինը դիմեց նախ հանդէսին մասնակցող ֆրանսիացի հիւրերին, բացատրեց մի քանի խօսքով յօբելեանի իմաստը. „Փորթուգալեան նոյնն է հայերի համար, ինչոր Հերցեն ռուսների համար. — հիմնագիր ազատ և ըմբոստ խօսքի՝ արտասահմանում։ Հայերը չեն մոռանայ — հակառակ այն գձուձ, terre-à-terre քաղաքականութեան, որ մղեցին իրենց հարցի վերաբերմամբ ֆրանսիական մի երկու մինիստրներ, դառն յուսախաբութիւն պատճառելով,— հայերը չեն կարող մոռանալ, որ ֆրանսիական այս ազատ հողի վրայ ապաստանեց առաջին հայ քաղաքական տարագիրը և այստեղից փորձեց սթափեցնել մտքերը բռնակալութեան ճիրաններին մատնուած հեռաւոր հայրենիքի մէջ"...

Ապա շարունակեց հայերէն, գծեց պատմական խոշոր իրողութիւնների այն շարանը, որոնք ծնունդ տուին „Արմենիա"ին և Մկրտիչ Փորթուգալեանի քարոզչութեան։

Նա ծնունդ էր իր պատմական միջավայրի։ Մի շարք սերունդներ թոթովել էին արդէն Ազատութեան ու Ըմբոստացման բառերը։ 40-ական թուականները՝ Ռուսինեանների ու Պալեանների բերնով, 50-ական թուականները՝ Վարագեան „արծիւների" քարոզներով, 60-ական թուականները՝ Սահմանադրութեան լոզունգներով, 70-ական թուականները՝ Բաֆֆիի և ամբողջ կովկասահայ պլէյեադի գրուածքներով... Հապա կեանքն ևս—թիւրքահայ ժողովրդական կեանքը—սկսել էր արդէն փոթորկուել... 61-րդ յօդուածը վիժել էր, Բաֆֆիի Ալանները երևան էին գալիս Հայաստանում, մասնաւորապէս Վասպուրականում, իսկ 1882-ին բռնւում էր արդէն Էրզրումի մէջ առաջին հայ գաղտնի ընկերութիւնը... Ահա մի այդպիսի մթնոլորտում էր, որ հանդէս եկաւ Փորթուգալեանը...

Ատենախօսը նկարագրեց „Արմենիա"ի առաջին քայլերը և նրա գործած տպաւորութիւնը երկրի մէջ, մասնաւորապէս Կովկասում.

Ռուսերի մի խուլ որոտ էր, որ Միջերկրականը ճեղքելով գալիս հասնում էր մեր պատանեկան ականջներին. կրօնական ջերմեռանդութեամբ էինք պահում ծոցի մէջ „Արմենիա"-ի հազագիւտ ու արգելուած համարները, անցնում էին նրանք ձեռք ձեռք, մինչև որ խպտա տրորւում էին...

... Ծնուեց Հայ Հայրենասիրական Միութիւնը, ճիւղեր արձակեց մանաւանդ Վասպուրականում... Հրապարակ եկան շատով ուրիշ կուսակցութիւններ, շարժումը կտրատուեց... Կուսակցութիւնների անհամաձայնութիւնը չէր պատճառ հայոց դատի անաջողութեան, այլ պետութիւնների անհամաձայնութիւնը, դիւանագիտական շարաշուք խաղերը... Չ'ողբա՞նք անվերջ մեր ներքին անմիաբանութիւնը, որ դարերից ի վեր հայ գործիչը պատճառ է սեպել մեր ազգային աղէտների և որի վրայ մեր յօբելեարն ևս ծանրացել է երկարօրէն, իբրև բացառապէս հայ-ցեղային մի արատ... Նա յատուկ է, սակայն, նաև աւելի բարձր ազգերի։ Ֆրանսիայի մէջ ևս յաճախ ենք լսում ճիչ ու վայնասուն՝ ներքին անմիաբանութեան տոթիւ և Մեծ Յեղափոխութեան օրերից ի վեր առած է դարձած. „gallus gallo lupus", „գողիացին գայլ է գողիացու համար" անախորժ դարձուածը... Եղան ծրագրի ու տակտիկի հակառակութիւններ հայկական կազմակերպութիւնների մէջ — ազգը չի կարող միակերպ մտածել, միակերպ զգալ—սակայն դէթ մենք, դաշնակցականներս, քննադատելով հանդերձ Փորթուգալեանի գործունէութեան ուղղութիւնը, միշտ տածել ենք անկեղծ յարգանք դէպի նրա անձն ու աշխատանքը...

Խօսք առաւ պ. Ես. Մինասեանը, հին ու տարագիր մի յեղափոխական.

Այսօր Մարսէյլի հայութիւնը ժողովւել է այս յարկի տակ իր երախտագիտական զգացումներն արտայայտելու ձեզ, պատկառելի Յօբելեար, իբրև լուսագոյն գաղափարների մի զինւորի, որ տասնեակ տարիներ գործել ու տքնել է իր հարազատ ժողովրդի դատը պաշտպանելու համար։

Դուք կաստրեցիք ձեր մարդկային պարտականութիւնը, հաւատարիմ մնալով մինչև խորին ծերութիւն՝ մարդկութեան լուսագոյն զաւակների դաւանած ըմբոստ գաղափարներին, մի նշանահեց անգամ չփոխելով ձեր կեանքի մէջ, այնքան հարուստ զրկանքներով։

Այդ օրերում, երբ Հայաստանի մէջ հայ ժողովուրդը լոյս էր խնդրում, իսկ Պոլսի աղաներն ու գիտունները ֆէսերը թեք դրած՝ Բոսֆորի գեղածիծաղ ափերում իրենց անամէջ ճառերովն էին հիանում, ոչ մի զոհաբերութիւն յանձն չ՝առնելով դէպի երկրի խաւարի մէջ դեգերող հայ ժողովուրդը, դուք եկաք առաջինը, սիրելի Փորթուգալեան, որ՝ իբրև ժողովրդի հարազատ զաւակ, անցաք տառապանքների աշխարհը։

Ո՞վ չի ճանաչում ձեզ և ո՞վ չգիտէ ձեր անձնուէր գործունէութիւնը։ Ես դեռ ուսանող, երիտասարդ հասակում, կը յիշեմ, Կովկասի հայ ժողովրդի մէջ Փորթուգալեան անունը բերանից բերան էր հոլովւում։

Դարեր օրեր շատ տեսաք, տառապանքներ շատ կրեցիք. դա ձեզ նման հասարակական գործիչների անխուսափելի ճակատագիրն է այս անիծեալ աշխարհում, թո՛ղ այդ ձեզ չվշտացնէ, բայց դուք ձեր կրած տառապանքներով, ձեր գաղափարական գործունէութեամբ կանգնեցիք ձեզ համար մի անձեռագործ արձան։

Մեր այս տխուր իրականութեան մէջ, ըստ երևոյթին կը նկատուին շատ երջանիկներ, ճոխ ու փարթամ կեանքեր. մարդիկ, որոնք իրենց եսական վայելքներից դուրս անընդունակ են ոչինչ ըմբռնելու. մարդիկ, երջանիկներ, որ այսօր կան ու շնչում են, բայց վաղը նրանք ընդմիշտ կորած են, պատմութեան համար նրանք գոյութիւն չ՝ունին, պատմութեան մէջ նրանք տեղ չ՝ունին։

Խրիմեաններ, Իզմիրլեաններ, Պատկանեաններ, Արծրունիներ, Բաֆֆիներ, Փորթուգալեաններ, Քրիստափորներ, Զաւարեաններ—ահա՛ մարդիկ, ահա՛ գործիչներ, որոնք իրենց ամբողջ էութեամբ, իրենց ժողովրդասիրութեամբ, իրենց անկաշառ ոգով կազմելու են մեր նորագոյն պատմութեան ամենափայլուն էջերը։

Կ՝անցնին դարեր, բայց դուք ու ձեր նմանները, սիրելի Փորթուգալեան, կ՝ապրիք պատմութեան համար ու ձեր անձնուէր գործունէութիւնը կը լինի գաղափարական խթան մեր ապագայ սերունդներին։

Ապա խօսք տուեց Թիւրքահայ գործիչ պ. Վահան Զարդարեանին, որ ասաց ի միջի այլոց հետևեալը

Ինձի գեղեցիկ անակնկալ մ՝եղաւ այս Յօբելեանին յետաձգումը, ես որ կը կարծէի թէ չպիտի հասնէի՝ Ամերիկայէ վերադարձէս, այդ յետաձգումով է՝ որ բախտը կունենամ ներկայ գտնուիլ և միանգամայն Թրքահայ դրչի եղբայրներներուս անունով իմ շնորհաւորանքը ներկայացնել քեզ, մեծանուն Յօբելեար, դուն որ եղար ռահվիրան Հայ Յեղափոխութեան։

Քու գործունէութեանդ լրագրական մասն կրսկսի „Ասիա“ թերթով, երբ 76-ական թուականներուն, հոն քու այդ հրատարակած թերթերուդ մէջ ուրիշ թերթերէն տարբեր ուղղութիւն մը ընդդրկեցիր, ուղղութիւն՝ որ վերջը „Արմենիա“ով շարունակեցիր։ Պոլիս չկրցար մնալ, քանի որ ալ սև ամպերը սկսած էին կուտակուիլ, ամէն ինչ ալ սկսած էր բռնապետական դառնալ, հոն ազատութեան գաղափարը մուտ գտած էր ու ալ չէիր կարող մնալ հոն, անոր համար որ հալածանքը կրսկսէր քեզի դէմ։ Հոն Եւրոպայի մէջ Պերլինի յօդուածը կը գրուէր։ Օսմանեան սահմանադրութիւնը կը հատատուէր և միւս կողմէ ալ բռնապետութիւնը հետզհետէ կը վատթարացնէր հայութեան վիճակը. ու դուն տարիներով ուսուցչական ասպարէզի մէջ դեգերելէ զինի, կը դիմէիր Ֆրանսայի հիւրասէր ափերու վրայ, հոն հատատելու համար „Արմենիա“դ և անով Հայ Ըմբոստացումը, ասիկայ քու յօբելեանդ չէ, այլ Հայ Յեղափոխութեան յօբելեանն է, որ քեզմով սկսաւ մտնել ըմբոստ փուլի մը մէջ...

Ժողովուրդի զաւակն էր ան, տառապած ցեղին հարազատ տղան, որ տարիներ առաջ կը դիմէր Մարսէյլ, Ֆրանսական հիւրասէր դրօշակին տակ հիմնելու համար իր թերթը... Փորթուգալեանը աղաչողական ձևով չէր, որ կը ներկայանար եւրոպական դիւանագիտութեան, այլ կուգար ուղղակի հայ ժողովուրդին կը դիմէր, իրեն ցոյց տալով թէ ը մ բ ո ս տ ա ց ո ւ մ ն է՝ ս ր կ ա պ ր ե ց ն է ա զ գ ե ր ը ու հ ա յ չ ա ր չ ր կ ւ ա ծ ա զ գ ը պ է տ ք ու ն է ր յ ե ղ ա փ ո խ ո ւ թ ե ա ն և փոխանակ Սաղմոսի ան կուտար „Արմենիան“։ Տարիները անցան այն օրէն, յեղափոխութիւնը հետզհետէ ուռճացած կը ներկայանայ այսօր, այս գեղեցիկ յօբելեանի օրը անիկա համերաշխ մէկ սիրտ, մէկ հոգի և հայութեան ցաւերուն ցաւակից։ Դուք, ազնիւ Յօբելեար, ձեզի համար ամենէն գեղեցիկ մաղթանքը որ պիտի ըլլայ, այն է, մաղթել քեզ որ ապրիս ու տեսնես Հայ Ազատագրման երջանիկ օրը, որ ալ ուշ չէ և քիչ ատենէն պիտի տեսնես զայն, ու ան պիտի ըլլայ գեղեցիկ ու շնորհալի նէրը քու յօբելեանիդ...

Հանդէսը վերջացաւ պ. Փորթուգալեանի խիստ յուզիչ պատասխան-ճառով, որ, տարաբախտաբար, չունինք ձեռքի տակ։ Բազմութիւնը մի քանի անգամ ողջունեց Յօբելեարին բուռն ու երկարատև ծափերով։ Ամենքը միաբերան վկայում էին, որ Մարսէյլի հայ գաղութը չէր տեսած այդքան շքեղ մի հանդէս։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ԽԱՏԻՍԵԱՆ

Կովկասահայ երիտասարդութեան լաւագոյն օրերն է յիշեցնում այդ անունը։ Օրե՜ր խանդավառ և սրբազան յափշտակութեան, երբ այնքան մօտ էր թւում Իդէալի իրագործումը, երբ թիւրքահայոց ազատութիւնն ու անկախութիւնը ձեռք բերելու համար, բաւական էր թւում հրոսակային մի արշաւանք, մի թռիչք à la Գուկունեան...

Մեծ դեր խաղաց հանգուցեալ Խատիսեանը ոգևորութեան ու համատարած խմորումի այդ շրջանում—80-ական թուերի վերջում, երբ ծնունդ էր առնում Հ. Յ. Դաշնակցութիւնը—մեծ ու գործօն մասնակցութիւն ունեցաւ դէպքերի մէջ իր ուժեղ ու ըմբոստ խառնուածքով, իր կամքի և ինքնիշխանի ուժով և իր անսահման, հայրենասիրական ու յեղափոխական եռանդով։

Երկար չդիմացաւ այդ եռանդը կեանքի փոթորկոտ ձախորդութիւններին, Խատիսեան թողեց յեղափոխական հրապարակը, նուիրուեց հայրենասիրական նոյն անշէջ կրակով լեցուլ, խաղաղ գործունէութեան։ Իր վաղեմի ընկերները, այնուամենայնիւ, յարգանքով կը յիշեն միշտ իր անունը և ապագայ պատմագիրը յաճախ կը հանդիպէ Կոնստանդին Խատիսեանին, երբ կը փորձէ պատմել մանրամասնօրէն 1889—1890-ի Երկունքի շրջանը։

Ա Զ Դ

Խնդրում ենք մեր բոլոր բաժանորդներից և գործակալներից, որ շտապեցնեն 1914-ի բաժանորդագրութիւնը, այլապէս պիտի դադարեցնենք թերթի տարածումը—անգամ անհատ ընկերներին։

Բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է։

Յայտնում ենք ի գիտութիւն դործակալների, որ 1914-ից սկսած դադարեցնեն հատուածները։ Այդ առթիւ եղած ուլինելիք բոլոր դիմումները անկատար պիտի մնան։

Խնդրում է նոր հասցէների հետ ուղարկել նաև նորը։

Հասցէների փոփոխութիւնը ձրի է։

«ԴՐՕՇԱԿ»ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ